ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մակրոտնտեսական իրավիճակը 5

Փոխհարաբերությունները պետբյուջեի հետ 11

Արտաքին հատվածը 15

Դրամավարկային քաղաքականություն 17

Ֆինանսական շուկա 26

ՀՀ բանկային համակարգի զարգացման
հիմնական միտումները 31

Վճարահաշվարկային հարաբերություններ 35

Մակրոտնտեսական ցուցանիշները
2002 թ. հունվար - մարտին .....… 40

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ 48

2002 թվականի առաջին եռամսյակի մակրոտնտեսական միջավայրին բնորոշ էր ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային ծրագրով նախատեսվածի համեմատ ցածր տնտեսական ակտիվությունը: Ընդհանուր առմամբ, ծրագրով ակնկալվում էր, որ Քրիստոնեության 1700-ամյակին ընդառաջ տոնակատարությունների ազդեցությամբ պայմանավորված արտադրական ներուժի ընդլայնումը և եկամուտների աճը անխուսափելիորեն կփոխանցվեն նաև 2002 թվական: Ընդ որում, 2002 թվականին ակնկալվող զգալի կապիտալ ներհոսքը լրացուցիչ ակտիվություն պետք է մտցներ տնտեսության ճյուղերում և հանգեցներ տնտեսական աճի բարձր մակարդակի, որը հաշվի առնելով՝ 2002 թվականի առաջին եռամսյակի համար ծրագրվել էին նպատակային հետևյալ ցուցանիշները. տնտեսական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ 13.7%, ՀՆԱ դեֆլյատոր՝ 4.6%, սղաճը՝ 3.1% (ժամանակահատվածի վերջի դրությամբ):

Նախորդ տարվանից նկատված տնտեսական ակտիվության բարձր տեմպերը պետք է նպաստեին ինչպես ներքին պահանջարկի, այնպես էլ արտահանման աճին:

Իր հերթին՝ համախառն առաջարկի կառուցվածքում բարձր տնտեսական աճին առավելագույնս պետք է նպաստեր շինարարության (պայմանավորված արտաքին աղբյուրներից միջոցների ներհոսքով), արդյունաբերության (պայմանավորված արտահանման աճով), ինչպես նաև ծառայությունների (պայմանավորված բնակչության եկամուտների աճով) ճյուղերում նկատված բարձր ակտիվությունը:

Այնուամենայնիվ 2002 թ. առաջին եռամսյակի արդյունքներով՝ գրանցվել են տնտեսական աճի 7.4%, ՀՆԱ դեֆլյատորի 1.0% և սղաճի ցուցանիշի (ժամանակահատվածի վերջ) 0.9 % մակարդակներ: Ստեղծված մակրոտնտեսական միջավայրին նպաստել է նաև սպասվածից ցածր արտաքին կապիտալ ներհոսքը (մասնավորապես Լինսի հիմնադրամի[1] կողմից տրամադրվող կապիտալ տրանսֆերտը և պարենային ապահովման դրամաշնորհը), ինչպես նաև ստացված արտաքին միջոցների (ԿԲՎ-ի՝ 2001 թվականից 2002 թ. տեղափոխված 14.3 մլն ԱՄՆ դոլար) մի մասի հաշվին չնախատեսված արտաքին պարտավորությունների վճարումը: Արդյունքում՝ դրամավարկային ծրագրով նախատեսված ամբողջական պահանջարկի անհրաժեշտ ընդլայնում տեղի չի ունեցել:

ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ[2]

Հատկանշական է, որ եռամսյակի ընթացքում փաստացի գրանցված համախառն պահանջարկի աճը, ծրագրվածի համեմատ, զիջել է համախառն առաջարկի աճին, որի արդյունքում գրանցվել են ՀՆԱ դեֆլյատորի և սղաճի ցածր մակարդակներ (համախառն պահանջարկի փաստացի աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 9.1%՝ ծրագրված 17.%-ի փոխարեն, իսկ համախառն առաջարկինը՝ 7.4 % ծրագրված 13.7%-ի փոխարեն):

ՄԱՍՆԱՎՈՐ ՍՊԱՌՈՒՄԸ 2002 թվականի առաջին եռամսյակի ընթացքում (իրական արտահայտությամբ), նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 8.8%-ով՝ ծրագրված 13.4%-ի փոխարեն, իսկ նախորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 13%-ով: Վերջինս նպաստել է ծրագրի համեմատ ցածր պահանջարկի ձևավորմանը:

Ընդհանուր առմամբ, սպառման փաստացիի համեմատ բարձր աճի ծրագրավորումը պայմանավորված էր այն ակնկալիքով, որ 2001թ. ընթացքում բնակչության եկամուտների աճը 2002թ. էական ազդեցություն կունենար մասնավոր սպառման վրա: Մյուս կողմից, դրան որոշ չափով պետք է նպաստեր նաև բյուջեի ծախսային քաղաքականությունը: Թերևս մասնավոր սպառման, հետևաբար և ամբողջական պահանջարկի ծրագրման ժամանակ բնակչության եկամուտների բևեռվածության ազդեցության վերաբերյալ գնահատումների բացակայության պատճառով հնարավոր է նաև, որ հաշվետու ժամանակահատվածի համար նման սպասումները գերագնահատված լինեին: Այլ կերպ ասած՝ մասնավոր սպառման փաստացի ձևավորված ցուցանիշը թույլ է տալիս ենթադրել, որ նախորդ տարեվերջին բնակչության եկամուտների աճը, եկամուտների բևեռվածության պայմաններում, ցանկալի ազդեցություն չունեցավ սպառման վրա:

---

[1] Լինսի հիմնադրամի միջոցները ստացվում են փաստացի կատարված աշխատանքի դիմաց, ուստի դրանց ծախսումը ամնիջապես արտահայտվում է ՀՆԱ-ում:

[2] Համախառն պահանջարկի տարրերի ընդհանուր միտումները համադրվել են ինչպես նախորդ ժամանակահատվածի, այնպես էլ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների հետ՝ առաջին դեպքում համախառն պահանջարկի սեզոնային դրսևորումները, իսկ երկրորդ դեպքում՝ տարեկան միտումները ուսումնասիրելու համար:

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների աճը (իրական արտահայտությամբ) 2002 թ. առաջին եռամսյակում

%

Ցուցանիշներ	2001 թ. IV եռ. նկատմամբ, փաստացի	2001 թ. IV եռ. նկատմամբ., ծրագրային	2001 թ. I եռ. նկատմամբ, փաստացի	2001 թ. I եռ. նկատմամբ, ծրագրային, %
Իրական ՀՆԱ	-13.2	-8.1	7.4	13.7
Ներքին պահանջարկ	-15.9	-9.2	7.9	16.7
Սպառում	-14.1	-8.6	8.5	14.3
Պետական	-30.8	5.7	2.4	32.1
Մասնավոր	-13.0	-9.3	8.8	13.4
Կապիտալ ներդրումներ	-27.8	-12.8	3.5	34.5
Պետական	-52.0	-8.4	17.8	215.2
Մասնավոր	-21.0	-14.4	1.4	9.8
Ներմուծում	-7.3	-13.8	21.6	12.4
Արտահանում	10.8	-18.1	38.3	9.2

ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածում, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատությամբ, աճել է (իրական արտահայտությամբ) 3.5%-ով՝ ծրագրված 34.5%-ի փոխարեն: Նախորդ եռամսյակի համեմատ համախառն ներդրումների նվազումը կազմել է 27.8% (2001 թ. առաջին եռամսյակում նշված ցուցանիշը կազմել է 28.5%)՝ ծրագրված 12.8% նվազման փոխարեն:

Համախառն ներդրումների փաստացի ցուցանիշի նման շեղումը ծրագրով նախատեսվածից հիմնականում պայմանավորված էր պետական հատվածի կապիտալ ծախսերի թերի կատարմամբ (ծրագրված 16.6 մլրդ դրամի փոխարեն փաստացին կազմել է 6.8 մլրդ դրամ): Իսկ վերջինս բացատրվում է դրամավարկային ծրագրով նախատեսված՝ Լիճսի հիմնադրամի կողմից տրամադրվող և ՕԻԳ-երի այլ միջոցների թերի ստացմամբ:

ՊԵՏԱԿԱՆ ՍՊԱՌՈՒՄԸ նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատությամբ ավելացել է (իրական արտահայտությամբ) 2.4%-ով՝ ծրագրված 32.1% աճի փոխարեն, իսկ նախորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 30.8% -ով: Ծրագրում պետական սպառման նման աճի ակնկալումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ հաշվետու ժամանակահատվածում նախատեսվել էր նաև նախորդ տարում չստացված Կառուցվածքային բարեփոխումների վարկի 14.3 մլն ԱՄՆ դոլար գումարի ստացում և դրա հաշվին՝ նախորդ տարիների ներքին ծախսերի գծով առաջացած պարտքերի մարում: Սակայն փաստացի ստացված վարկի գումարի մեծ մասը (8.1 մլրդ դրամից մոտ 5 մլրդ դրամը), ներքին ծախսեր կատարելու փոխարեն, ձևակերպվել է որպես քվազի-ֆիսկալ հատվածին վարկ, իսկ վերջինս այդ գումարն ուղղել է արտաքին պարտավորությունների մարմանը: Արդյունքում՝ ամբողջական պահանջարկի ծրագրով նախատեսված ընդլայնում տեղի չի ունեցել: Պետական սպառումը անվանական արտահայտությամբ կազմել է 23.3 մլրդ դրամ՝ ծրագրված 30.3 մլրդ դրամի փոխարեն:

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատությամբ, գրանցվել է զուտ արտահանման 3.5% իրական աճ՝ ծրագրված 15.7%-ի փոխարեն: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ չնայած ապրանքների և ծառայությունների արտահանման փաստացի աճը գերազանցել է ծրագրվածը (ծրագրված 9.2% աճի փոխարեն փաստացին կազմել է 38.3%), միևնույն ժամանակ ծրագրվածից ավելի է աճել նաև ապրանքների և ծառայությունների ներմուծումը. փաստացին կազմել է 21.6%՝ ծրագրված 12.4%-ի փոխարեն:

Արտահանման և ներմուծման նման աճը հիմնականում պայմանավորված էր թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղների հումքի ներմուծման և դրանցից պատրաստված արտադրանքի արտահանման աճով: Ընդ որում, ներմուծման՝ ծրագրվածից ավելի աճը բացատրվում է նաև մեքենասարքավորումների ներմուծման ծավալների ավելացմամբ: Փաստորեն, ներմուծման և արտահանման աճը սպառողական ապրանքների ներմուծման և արտահանման աճի արդյունք չէր:

ՀԱՄԱԽԱՌՆ ԱՌԱՋԱՐԿ[3]

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: Նախորդ տարի արդյունաբերության ոլորտում արձանագրված միտումները, բացառությամբ որոշ կառուցվածքային տեղաշարժերի, ընդհանուր առմամբ դրսևորվել են նաև 2002 թ. առաջին եռամսյակում: Արդյունաբերական

[3] «Համախառն առաջարկ» բաժնի՝ 2002թ. վերաբերող ցուցանիշների աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրության ծառայության «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2002 թ. հունվար-մարտին» պարբերականի նախագիծն է: Իրական աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ են:

արտադրանքի իրական աճը կազմել է 13.9%՝ նախորդ տարվա 9.2%-ի փոխարեն (առանց էներգետիկայի այդ ցուցանիշը կազմել է 27.1%՝ նախորդ տարվա 20.3%-ի փոխարեն):

Ցյուղի թողարկման կառուցվածքի հիմնական փոփոխությունը տեղի է ունեցել ի հաշիվ մշակող արդյունաբերության: Մասնավորապես՝ թողարկման ծավալի նշանակալի աճ գրանցվել է մետաղագործական և ոսկերչական արդյունաբերություններում: Եթե մետաղագործական ենթաճյուղում գրանցված իրական աճը դրսևորվել է սեփականաշնորհված ձեռնարկությունների ներուժի աստիճանական գործարկման շնորհիվ, ապա ոսկերչական արդյունաբերության իրական աճը պայմանավորված էր նախորդ տարվա վերջին եռամսյակում ներկրված հումքի և կուտակված պաշարների օգտագործմամբ:

Քիմիական արդյունաբերությունում արձանագրվել է իրական թողարկման ծավալների 77%-ով նվազում՝ նախորդ տարվա 260% աճի փոխարեն, իսկ իրացված արտադրանքի ծավալները մոտ 9%-ով գերազանցել են արտադրության ծավալները: Միևնույն ժամանակ, ավարտին է մոտենում ցյուղի առավել նշանակալի ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացը, ինչը թույլ է տալիս ակնկալել ուղղակի ներդրումների և հետևաբար՝ թողարկման ծավալների աճ: Վերջին երկու տարիների ընթացքում քիմիական արդյունաբերության ցյուղի թողարկման իրական աճի գրանցված կտրուկ տատանումները հիմնականում ցյուղում առաջատար երկու խոշոր ձեռնարկությունների անկայուն գործունեության հետևանք են:

Deleted: է տատանողական

Արդյունաբերության հիմնական ցյուղերի ցուցանիշները հունվար-մարտին (%)

Արդյունաբերության ցյուղ	տեսակարար կշիռ*		իրական աճ (+) / նվազում (-) **	
	2001	2002	2001	2002
Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում	35.5	30.6	-6.9	-12.7
Հանքագործական արդյունաբերություն	6.4	6.2	41.5	6.5
Մշակող արդյունաբերություն, որից՝	58.2	63.2	18.4	28.9
սննդի արդյունաբերություն	33.1	35.9	18	11.2
մետաղագործական արդյունաբերություն	6.7	12.2	73.3	69
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	6.4	6.2	17.2	108.3
քիմիական արդյունաբերություն	3.2	0.8	260	-77
մեքենաների և սարքավորումների արտադրություն	1.3	0.7	26.2	-43.4
Ամբողջ արդյունաբերություն	100	100	9.2	7.6

** Ընթացիկ տարում տեսակարար կշիռը ամբողջ արդյունաբերության մեջ:*
*** Տվյալ ցյուղի համախառն արտադրանքի իրական աճ / նվազում:*


Արդյունաբերական համախառն արտադրանքում արտահանված արտադրանքի տեսակարար կշիռն աճել է 6 տոկոսային կետով և կազմել 37%: Ընդ որում, արդյունաբերական արտադրանքի արտահանման կառուցվածքում փոքր-ինչ նվազել է ԱՊՀ երկրներ արտահանման տեսակարար կշիռը՝ 2002թ. առաջին եռամսյակում՝ 41%:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում գրանցվել է թողարկված արտադրանքի 5.3% իրական աճ (2001 թ.՝ 0.5%)՝ հիմնականում ի հաշիվ անասնապահության: Սակայն հարկ է նշել, որ եռամսյակի ընթացքում արձանագրվել է ցանքատարածությունների աճ, ինչը կարող է նպաստել ցյուղի թողարկման ծավալների մեծացմանը արդեն հաջորդ եռամսյակում:

ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ոլորտում տարեսկզբին արձանագրվել է բավականին բարձր տնտեսական ակտիվություն: Իրականացված շինարարական աշխատանքների ընդհանուր ծավալի աճը, իրական արտահայտությամբ, այս եռամսյակում մեծ էր՝ 11.8% (2001 թ.՝ 3.8%):

Կապիտալ շինարարության ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում, ձեռնարկությունների տեսակարար կշռի նվազման հետ մեկտեղ, ավելացել են ներդրումների և պետության միջոցների տեսակարար կշիռները: Ընդ որում, արտադրական նշանակության օբյեկտներում կատարված կապիտալ շինարարության տեսակարար կշիռը կազմել է ընդհանուրի 39.6%-ը՝ 2001 թ. առաջին եռամսյակի 56%-ի փոխարեն:

Կապիտալ շինարարության ցյուղային կառուցվածքում ավելացել են գյուղատնտեսության և սոցիալական ոլորտների տեսակարար կշիռները, նվազել արդյունաբերության և տրանսպորտի, կապի ոլորտների տեսակարար կշիռները:



ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Տրանսպորտի ոլորտում 2002թ. առաջին եռամսյակում նկատվել են անցյալ տարվա աշխուժացման միտումները: Եռամսյակի արդյունքներով՝ բեռնափոխադրումներն ավելացել են 38.8%-ով, իսկ բեռնաշրջանառությունը՝ 0.6%-ով: Առանձնակի ուշադրության է արժանի երկաթուղային տրանսպորտի ոլորտում, նախորդ տարիներին արձանագրված անկման փոխարեն, հաշվետու ժամանակահատվածում դրսևորված աշխուժացումը, որն արտահայտվել է ինչպես բեռնափոխադրումների, այնպես էլ բեռնաշրջանառության ցուցանիշների՝ համապատասխանաբար 96.1% և 71.8% աճով (2001 թ. առաջին եռամսյակի 20.4% և 16.3% նվազումների փոխարեն):

Կապի ոլորտում գրանցվել է ընդհանուր հասույթի 11.3%-ով անկում՝ անցյալ տարվա 10.4% աճի փոխարեն: Արձանագրված անկման հիմնական պատճառը հեռախոսային խոսակցություններից ստացված հասույթի 18.8%-ով նվազումն էր:

Սպառողական շուկայում 8.8%-ով աճել են մանրածախ ապրանքաշրջանառության ծավալները՝ նախորդ տարվա առաջին եռամսյակի 14.2%-ի փոխարեն: Միևնույն ժամանակ, 5.1% աճ է գրանցվել բնակչությանը մատուցված ծառայությունների գծով (2001թ. 2%-ի փոխարեն)՝ պայմանավորված կենցաղային ծառայությունների 15.7% աճով:

ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

Համաձայն «2002 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի»՝ սղաճի ծրագրային մակարդակը՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ և միջին տարեկան կտրվածքով համապատասխանաբար կազմելու է 3.0% և 2.3%: Ընդ որում, առաջին եռամսյակում ծրագրով նախատեսվում էր ապահովել համապատասխանաբար 3.1% և 4.6% սղաճ:

Այնուհանդերձ, 2002 թ. 1-ին եռամսյակի վերջին գրանցվել է 0.9% սղաճ՝ նախորդ տարվա 3.7%-ի փոխարեն: Ընդ որում, հունվարին գրանցվել է 2.2% սղաճ, իսկ փետրվարին և մարտին՝ համապատասխանաբար 0.7% և 0.6% դեֆլյացիա: Եռամսյակի ընթացքում սղաճի միջին մակարդակը կազմել է 0.4%՝ նախորդ տարվա 2.5%-ի փոխարեն:

2002 թ. առաջին եռամսյակում սղաճի առաջարկի գործոնները դրսևորվել են ծրագրի շրջանակներում: Մասնավորապես, անուղղակի հարկերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում համընկել է ծրագրված 9% մակարդակին, իսկ միջին փոխարժեքի արժեզրկումը 2001 թ. վերջին եռամսյակի նկատմամբ կազմել է 0.7%՝ գնահատած 0.3%-ի փոխարեն: Դա իր հերթին վկայում է, որ սղաճի փաստացի ցուցանիշի շեղումը ծրագրային մակարդակից հիմնականում պայմանավորվել է համախառն պահանջարկի՝ ծրագրի համեմատ ցածր աճով:

Deleted: ծրագրված


Եռամսյակային ՍԳԻ վարքագիծն առավել պատկերավոր կարելի է ներկայացնել սպառողական զամբյուղի 3 հիմնական՝ պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային և վճարովի ծառայությունների խմբերի միջոցով:

2002 թ. *(2001 թ. դեկտ. = 100)*	**Հունվար**	**Փետրվար**	**Մարտ**
ՍԳԻ	102.2	101.5	100.9
Սպառման ապրանքներ	102.6	101.7	100.9
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	103.3	102.3	101.3
Ոչ պարենային ապրանքներ	99.7	99.5	99.4
Վճարովի ծառայություններ	100	100	100.4

Եռամսյակի ընթացքում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գներն աճել են հունվարին և ապա նվազել եռամսյակի մնացած ամիսներին՝ հիմնականում պայմանավորված մսամթերքի (փետրվար-մարտ ամիսներին 2% դեֆլյացիա), ինչպես նաև բանջարեղենի և կարտոֆիլի (փետրվար-մարտ ամիսներին 5.4% դեֆլյացիա) գների մակարդակի նվազմամբ:

Ոչ պարենային ապրանքների և ծառայությունների շուկաներում գների կտրուկ տատանումներ չեն արձանագրվել, բացառությամբ փոստային ծառայությունների գների, որոնք եռամսյակի վերջին երկու ամիսներին աճել են 45.9%-ով:

2002 թվականի առաջին եռամսյակի ընթացքում գրանցվել է 0.5%[4] բնականոն դեֆլյացիա՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված 0.66% բնականոն սղաճի փոխարեն:




Համաձայն բնականոն սղաճի հաշվարկների՝ նշված ժամանակահատվածում սեզոնային գյուղատնտեսական ապրանքների գների աճի հետևանքով գրանցվել է 1.4% սղաճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված 3.1%-ի փոխարեն: Պետության կողմից կարգավորվող և լրիվ կամ մասնակի մենաշնորհային գները գրեթե չեն փոխվել՝ փոստային ծառայությունների սակագների 45.8% աճի պարագայում սպառողական զամբյուղում վերջինիս տեսակարար կշռի չափազանց փոքր լինելու պատճառով:

Deleted: պետության կողմից կարգավորվող և լրիվ կամ մասնակի մենաշնորհային գների փոփոխություն գրեթե տեղի չի ունեցել,իսկ

Deleted: դիմաց:Գ

2002 թվականի առաջին եռամսյակի ընթացքում գյուղային գների[5] փոփոխությունների արդյունքում, ՀՆԱ դեֆլյատորի փոփոխությունը 0.6 տոկոսային կետով գերազանցել է միջին սղաճը:



ՀՀ մարզերում անցկացված դիտարկումների արդյունքների համաձայն՝ 2002 թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ բնակավայրերում գների փոփոխությունը հանգեցրել է. Թալինում՝ 0.4% դեֆլյացիայի, Գյումրիում՝ 1.7% սղաճի: Ընդ որում, Երևանում գրանցվել է 1.1% սղաճ:

[4] *Բնականոն սղաճի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներ են:*


[5] *Ճյուղային գների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է ՀՀ ազգային վիճակագրության ծառայության «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2002թ. հունվար-մարտին» պարբերականի նախագծից:*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ


Տնտեսական աշխուժացման հետ մեկտեղ, աշխատուժի շուկայում շարունակվել են նախորդ տարիներին դրսևորված միտումները: Այսպես, ՀՀ-ում միջին ամսական անվանական աշխատավարձը, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ աճելով 8.4%-ով, կազմել է 23.7 հազ. դրամ՝ 2001թ. համապատասխանաբար 12%-ի և 21.8 հազ. դրամի փոխարեն:

Միաժամանակ, նախորդ տարվա մարտի համեմատ մեկ տոկոսային կետով նվազել է գործազրկության մակարդակը՝ հասնելով 9.6%-ի (ըստ պաշտոնական վիճակագրության): Մյուս կողմից, նախորդ տարվա մարտի համեմատ 35.1%-ով նվազել է նպաստառու գործազուրկների թիվը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործազրկության նպաստները վճարվում են միայն որոշակի ժամանակահատվածի ընթացքում, նշված միտումները վկայում են, որ գործազուրկների կազմում զուտ ներհոսքը չի փոփոխվել: Վերջինս իր հերթին թույլ է տալիս ենթադրել, որ նման վիճակում գտնվելու պատճառը շուկայի պահանջներին հարմարվելու՝ գործազուրկների զգալի մասի ցածր հակվածությունն է:

ՀՀ պետբյուջեի 2002 թվականի տարեկան ծրագրի եռամսյակային համամասնությունների պահպանման պայմաններում առաջին եռամսյակում ՀՀ պետբյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները պետք է կազմեին տարեկան ծրագրի 22.2%-ը, հարկային եկամուտները (ներառյալ պետական տուրքը)՝ 20.6%-ը, ծախսերը՝ 19%-ը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում նշված ցուցանիշները կազմել էին համապատասխանաբար՝ 21.7%, 20.6%, և 16.7%-ը):




Ընդհանուր առմամբ, եռամսյակի ընթացքում ապահովվել են բյուջեի եռամսյակային համամասնությունները, և տարեկան ծրագրի նկատմամբ արձանագրվել են պետական բյուջեի եկամուտների և դրամաշնորհների 21.2%[1], հարկերի գծով (ներառյալ պետական տուրքի գումարները) 20.5%, իսկ ծախսերի գծով՝ 20.0% կատարման մակարդակներ:




[1] *Ցուցանիշները նախնական են և ենթակա են ճշգրտման:*

Այսպիսով, առաջին եռամսյակում պետբյուջեի փաստացի եկամուտներն և դրամաշնորհները կազմել են եռամսյակային ծրագրի 95.6%-ը, հարկային եկամուտները՝ 99.4%-ը (ծրագրված 40.2 մլրդ դրամի փոխարեն հավաքագրվել է 39.9 մլրդ դրամի), դրամաշնորհները՝ 53.5%-ը, իսկ ոչ հարկային եկամուտները գերակատարվել են 14.7%-ով: Ոչ հարկային եկամուտների հավաքագրման նման բարձր մակարդակը պայմանավորված էր ՀՀ ԿԲ կողմից 2.7 մլրդ դրամի շահույթի փոխանցմամբ:




Ինչ վերաբերում է նախորդ տարվա առաջին եռամսյակի նկատմամբ այս տարվա նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշներին, ապա ձևավորվել է հետևյալ պատկերը. ՀՀ պետբյուջեի եկամուտներն ու դրամաշնորհներն աճել են 3.2%-ով, հարկերը՝ 12 %-ով, ոչ հարկային և կապիտալ եկամուտները նվազել են 34%-ով, իսկ դրամաշնորհները նվազել են 23.2%-ով: Հարկային եկամուտների կառուցվածքում 11.7%-ով աճել են անուղղակի հարկերը. ակցիզային հարկը նվազել է 11%-ով, իսկ մաքսատուրքը և ավելացված արժեքի հարկը համապատասխանաբար աճել են 22.6%-ով և 17.7%-ով: Վերջինս մեծամասամբ պայմանավորված է ԱԱՀ մասին օրենքի փոփոխության հետևանքով ներմուծման հարկումից ստացված մուտքերի ավելացմամբ: Թեև ուղղակի հարկերն աճել են 9.6%-ով, սակայն դեռև պահպանվում է դրանց ցածր տեսակարար կշիռը ընդհանուր հարկային եկամուտներում:



Եռամսյակի ընթացքում բյուջեի ծախսերը կազմել են եռամսյակային ծրագրով նախատեսվածի 105.6 %-ը, ընդ որում՝ ընթացիկ ծախսերը՝ 112.7%-ը (պայմանավորված ծրագրով չնախատեսված 5.0 մլրդ դրամ արտաքին վճարմամբ), կապիտալ ծախսերը՝ 71%-ը, իսկ զուտ վարկավորումը՝ 88.7%-ը: Կապիտալ ծախսերի թերի կատարումը հիմնականում պայմանավորված էր արտաքին ֆինանսավորման

հաշվին իրականացվող կապիտալ ներդրումների թերի կատարմամբ, այն է՝ ծրագրված 5.2 մլրդ փոխարեն փաստացին կազմել է 3.9 մլրդ դրամ: Ընդ որում, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատությամբ ծախսերն ավելացել են 18%-ով, այդ թվում՝ ընթացիկ ծախսերն աճել են 29.6%-ով, իսկ կապիտալ ծախսերը և զուտ վարկավորումը համապատասխանաբար նվազել են 6%-ով և 47.2%-ով:



Չնայած պետական բյուջեի եռամսյակային ծրագրի նկատմամբ ծախսերի կատարման՝ վերը նշված մակարդակին և նախորդ տարվա նկատմամբ արձանագրված աճին, եռամսյակի արդյունքում իրականացված հարկաբյուջետային քաղաքականությունն ամբողջական պահանջարկի վրա ունեցել է 1.8% զսպող ազեցություն՝ պայմանավորված հետևյալ գործոններով՝

- ԿԲՎ-ի 2001 թվականի մասնաբաժնի՝ 8.0 մլրդ դրամի ստացումը նախատեսված չէր ՀՀ պետական բյուջեի առաջին եռամսյակի ծրագրում, որը, սակայն, նախատեսված էր ԿԲ կողմից ծրագրված մակրոտնտեսական ցուցանիշների և հետևաբար՝ հարկաբյուջետային ազդակների հաշվարկներում:
- «ՀՀ 2002 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ԿԲՎ-ի 2001 թվականի մասնաբաժինը պետք է ուղղվեր ներքին տնտեսության պարտքերի մարմանը, սակայն դրա 5.0 մլրդ դրամը ուղղվել է պետական արտաքին պարտավորությունների մարմանը:
- Պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում արձանագրվել է 6.4 մլրդ դրամ վիճակագրական շեղում, որի պատճառը եռամսյակի ընթացքում ծախսերի բացված ֆինանսավորման և փաստացի կատարված ծախսերի միջև առկա տարբերությունն էր: Փաստորեն, նշված գումարի չափով փաստացի ծախսեր դեռևս չեն կատարվել:

Հատկանշական է, որ հարկաբյուջետային քաղաքականությունը, եկամուտների հավաքագրման և ծախսերի կատարման առումով, եռամսյակի ընթացքում ունեցել է անհամաչափ բնույթ: 2002 թ. հունվար, փետրվար և մարտ ամիսների վերջին շաբաթներին բաժին է ընկել (միջինը) ամսական եկամուտների 51%-ը (պահպանելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածում դրսևորված միտումը), ընդ որում՝ ամսվա վերջին երեք օրերին հավաքագրվել է ամսվա եկամուտների 43.3%-ը՝ նախորդ տարվա 40%-ի փոխարեն: Վերջինիս հետևանքով կտրուկ տատանումներ են նկատվել բանկերի թղթակցային հաշիվների և կանխիկ դրամի շարժերի վարքագծերում:


Պետբյուջեի եկամուտների և ծախսերի՝ վերը նշված հարաբերության արդյունքում բյուջեի պակասուրդը կազմել է 4.0 մլրդ դրամ: Բյուջեի կատարման առումով հատկանշական է նախորդ տարիների պարտքերի մարման հոդվածի գծով 4.9 մլրդ դրամ ծախսերի իրականացումը՝ նախատեսված 5.0 մլրդ դրամի փոխարեն: Բյուջեի կանխիկ պակասուրդը[2], որը ներառում է նաև նշված 4.9 մլրդ դրամը, կազմել է 2.5 մլրդ դրամ, իսկ վիճակագրական շեղումը՝ 6.4 մլրդ դրամ (առաջացել է, քանի որ բյուջեի ծախսերն արտացոլում են բացված ֆինանսավորումը, այլ ոչ թե փաստացի ծախսերը): Նույն ժամանակահատվածում պակասուրդի ֆինանսավորումը կազմել է 2.5 մլրդ դրամ (–6.6 մլրդ դրամ՝ ներքին ֆինանսավորում, 9.1 մլրդ դրամ՝ արտաքին ֆինանսավորում):

ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության և ՀՀ պետական պարտքի կառավարման արդյունավետ կոորդինացման արդյունքում հաջողվել է կանխատեսվածից ավելի տեղաբաշխել 0.6 մլրդ դրամի

[2] *Կանխիկ պակասուրդը ներառում է եկամուտների և ծախսերի տարբերությունը, նախորդ տարիների պարտքերի մարումը և վիճակագրական շեղումը:*

արժեթուղթ (ծրագրված 1.7 մլրդ դրամի փոխարեն փաստացի զուտ մուտքերը կազմել են 2.3 մլրդ դրամ), ընդ որում՝ տեղաբաշխումն իրականացվել է տոկոսադրույքների նվազման պայմաններում: Այսպես, եռամսյակի ընթացքում միջին տոկոսադրույքը կազմել է 14 %՝ նախորդ տարվա առաջին եռամսյակի 24.3%-ի փոխարեն:

Պակասուրդի ֆինանսավորման արտաքին միջոցներից ստացվող զուտ մուտքերը կազմել են եռամսյակային ծրագրի 92.1%-ը, որտեղ 8.0 մլրդ դրամը կառուցվածքային բարեփոխումների վարկի 2001 թվականի մասնաբաժինն է, որը ստացվել է սույն թվականի հունվար ամսին՝ մուտքագրվելով գանձապետական միասնական հաշիվ:




Ամփոփելով նշենք, որ 2002 թ. առաջին եռամսյակում բյուջեի ցուցանիշների, մասնավորապես՝ արտաքին ֆինանսական հոսքերի նախատեսված ծավալների թերստացման հետևանքով զսպվել է նաև եռամսյակի համար նախատեսված համախառն պահանջարկի աճը և սղաճի ցուցանիշը:

2002 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրով 1-ին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նախատեսվում էր արտահանման 14.0% և ներմուծման 4% աճ, ինչի արդյունքում կանխատեսվում էր առևտրային հաշվեկշռի պակասուրդի 6.4%-ով կրճատում: Ընթացիկ հաշվի մյուս հոդվածների լավացման հաշվին սպասվում էր ընթացիկ հաշվի պակասուրդի 32.7%-ով կրճատում, որի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում պետք է կազմեր 5.4%:

Իրականում, ապրանքների արտահանումը (կրեդիտ) եռամսյակի ընթացքում աճել է 56.6%-ով (44.9 մլն ԱՄՆ դոլարով) և կազմել 124.1 մլն ԱՄՆ դոլար: Արտահանման աճը պայմանավորված էր դրա կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի արտահանման ծավալների՝ համապատասխանաբար 34.6 մլն ԱՄՆ դոլար և 6 մլն ԱՄՆ դոլար աճով: Ընդ որում, արտահանման ծրագրված և փաստացի ցուցանիշների զգալի տարբերության պատճառը առաջին հոդվածում ներառված ապրանքների արտահանման ծավալների շուրջ 35.8 մլն ԱՄՆ դոլարով գերազանցումն էր կանխատեսվածից: «Մանածագործական իրեր» ու «Սարքեր և ապարատներ» ապրանքախմբերի արտահանման ծավալներն ավելացել են համապատասխանաբար 3.8 մլն և 2.7 մլն ԱՄՆ դոլարով:

Ներմուծումը (դեբետ) եռամսյակի ընթացքում ավելացել է 16.3%-ով (25.2 մլն ԱՄՆ դոլարով) և կազմել 179.9 մլն ԱՄՆ դոլար՝ ի հաշիվ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի ներմուծման ծավալների՝ համապատասխանաբար 12.7 մլն, 6.1 մլն, 4.6 մլն ԱՄՆ դոլար և 2.1 մլն ԱՄՆ դոլար աճի: Ծրագրվածից փաստացի ցուցանիշների էական շեղումներ են նկատվել հատկապես «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» (շեղումը՝ մոտ 10.3 մլն ԱՄՆ դոլար) և «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» (շեղումը՝ 3.2 մլն ԱՄՆ դոլար) հոդվածներով:


Արտաքին ապրանքաշրջանառության նման բարենպաստ միտումների արդյունքում առևտրային հաշվեկշիռը եռամսյակի ընթացքում կրճատվել է ավելի քան 26.1%-ով (19.7 մլն ԱՄՆ դոլարով) և կազմել 55.8 մլն ԱՄՆ դոլար:



Ընթացիկ հաշվի մյուս հոդվածների գծով՝ ծրագրային ցուցանիշներից զգալի շեղումներ եռամսյակի ընթացքում չեն արձանագրվել, ինչի արդյունքում վերջինիս պակասուրդը կազմել է 16.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազելով 62.1%-ով (27.8 մլն ԱՄՆ դոլարով):

Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքի կրճատման, ինչպես նաև առևտրային բանկերի և այլ մասնավոր հատվածի արտարժութային ակտիվների աճի հետևանքով եռամսյակի ընթացքում կրճատվել են կապիտալ և ֆինանսական հաշվով գրանցված ֆինանսական հոսքերը: Արդյունքում՝ ներքին շուկայում կրճատվել է արտարժույթի առաջարկը՝ հանգեցնելով արտարժույթի շուկայում ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկմանը:


ՀՀ դրամ / ԱՄՆ դոլար հաշվարկային միջին եռամսյակային փոխարժեքը



Ըստ դիտարկումների՝ նշված հանգամանքը պայմանավորված էր նաև ներքին գործոններով: Նախ՝ հետևանք էր հունվար ամսվա վերջին ՀՀ դրամի նկատմամբ տնտեսությունում ձևավորված սեզոնային պահանջարկի կրճատմանը զուգընթաց ՀՀ կենտրոնական բանկի կողմից վերջինիս առաջարկի ոչ համամասնական չափով կրճատման, ինչպես նաև՝ որոշ առևտրային բանկերում ժամանակավորապես առաջացած ֆինանսական հիմնախնդիրների հետևանքով ավանդների նվազման: Ստեղծված իրավիճակում տնտեսության ավելցուկային դրամական միջոցներն ուղղվել են արտարժույթի շուկա: Վերջինս հանգեցնելով փոխարժեքի արժեզրկման, հետագա՝ փետրվար և մարտ ամիսներին արդեն վերածվել է սպեկուլյատիվ պահանջարկի, ինչի արդյունքում էլ եռամսյակի ընթացքում փոխարժեքն արժեզրկվել է 2.7%-ով:

Կենտրոնական բանկի ԶԱԱ-ը եռամսյակի ընթացքում նվազել են 12 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 139.1 մլն ԱՄՆ դոլար: Կենտրոնական բանկի համախառն արտաքին ակտիվների 11.6 մլն ԱՄՆ դոլարը եռամսյակի ընթացքում ուղղվել է արտաքին պետական պարտքի սպասարկմանը, միջբանկային արտարժույթի շուկայում Կենտրոնական բանկի կողմից իրականացվել է 10.8 մլն ԱՄՆ դոլար արտարժույթի վաճառք, որից շուրջ 8.7 մլն ԱՄՆ դոլարը առևտրային բանկերի միջոցով ուղղվել է արտաքին պարտքի սպասարկմանը: Մյուս կողմից, կառուցվածքային բարեփոխումների վարկի (SAC IV) ստացման արդյունքում պահուստները համալրվել են 14.3 մլն ԱՄՆ դոլարով:

ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեք (աճը նշանակում է արժեքավորում)



ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքը 2002 թվականի առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, արժեզրկվել է 7.0%-ով՝ ծրագրով նախատեսված 5.7%-ի փոխարեն: Սա պայմանավորված էր Հայաստանի սղաճի[3] համեմատ (0.4%), գործընկեր երկրների միջին կշռված սղաճի բարձր մակարդակով (13.2%) և դրամի անվանական արդյունավետ փոխարժեքի 4.8% արժեքավորմամբ:

[3] *Հաշվարկված է 2002 թվականի առաջին եռամսյակի միջինը՝ 2001 թվականի առաջին եռամսյակի միջինի նկատմամբ:*

Դրամավարկային քաղաքականության առաջին եռամսյակի ծրագիրը և հիմնական խնդիրները

2002 թվականի դրամավարկային քաղաքականության ռազմավարության հիմնական առանձնահատկությունն այն է, որ սպասվում էր խոշորածավալ արտարժութային ներհոսք, և ներքաշող գործիքների ակտիվ կիրառման միջոցով ԿԲ-ն պետք է փողի բազան կառավարեր տատանման թույլատրելի միջակայքի սահմաններում՝ արդյունքում ապահովելով որպես գլխավոր նպատակ ընդունված՝ սղաճի տարեկան մինչև 3% մակարդակը:

Արտաքին ֆինանսական հոսքերից առաջին եռամսյակում ակնկալվում էին ԿԲՎ-4-ի նախորդ տարվա մասնաբաժինը՝ 14.6 մլն դոլար, Պարենային անվտանգության ծրագրի դրամաշնորհը՝ 4.5 մլն եվրո և Լինսի հիմնադրամի դրամաշնորհի ընդհանուր գումարից 9.7 մլն դոլարը: Ընդ որում, Լինսի հիմնադրամի ծրագրով նախատեսված տարեկան գումարը հավասարաչափ չի բաշխվել եռամսյակների միջև, այլ, հաշվի առնելով առաջին եռամսյակում գործարար ակտիվության սեզոնային անկումը և այդ միջոցների հաշվին իրականացվելիք աշխատանքների նախապատրաստական փուլը, առաջին եռամսյակում նախատեսվել է միայն ընդհանուր ծավալի 17%-ը: Այնուամենայնիվ, նշված հոսքերի ծախսման պայմաններում անգամ եռամսյակի ընթացքում ծրագրվել է փողի բազայի և փողի զանգվածի դրամային մասի նվազում՝ տարեվերջի նկատմամբ համապատասխանաբար 6.5% և 5.3%-ով: Նման կանխատեսումը հիմնավորվում էր երկու գործոնով, նախ՝ տարեսզբին, որպես կանոն, զգալի նվազում է գործարար ակտիվությունը, հետևաբար կրճատվում է փողի պահանջարկը, մյուս կողմից՝ 2001թ. վերջին արձանագրվել էր փողի բազայի ծրագրային ցուցանիշի գերազանցում, և տարեսկզբին դրսևորվելու էր հակառակ միտումը՝ առավել արագ տեմպերով: Իսկ այս տարվա առանձնահատկությունն այն է, որ, պայմանավորված վերոնշյալ արտաքին հոսքերով, ծրագրվել էին նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատ նվազման ավելի ցածր տեմպեր:

Դրամավարկային քաղաքականության զարգացումները

ՓՈՂԻ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Տարվա առաջին երեք ամիսներին տնտեսության մյուս հատվածներում ձևավորված վերոնշյալ միտումները, որոնք փաստում են տնտեսական ակտիվության տեմպերի էական զսպման մասին, համապատասխան արտացոլումն են գտել նաև փողի պահանջարկի դրսևորումներում: Արդյունքում՝ արձանագրվել են դրամավարկային ցուցանիշների՝ եռամսյակի համար ծրագրված մակարդակներից որոշակի շեղումներ:

Ծրագրային և փաստացի դրամավարկային ցուցանիշների համեմատական աղյուսակ (ըստ 2002 թ. ֆինանսական ծրագրի)


Ցուցանիշներ	I եռամսյակ	
	Ծրագրային	*Փաստացի*
Փողի զանգված (M2X, ժամ. վերջ), մլրդ դրամ	169.5	162.4
Փողի շրջապտույտի արագություն	1.82	1.74
Դրամային զանգված (M2, ժամ. վերջ), մլրդ դրամ	80.5	80.0
Դրամի շրջապտույտի արագություն	3.79	3.56
Փողի բազա (ժամ. վերջ), մլրդ դրամ	75.1	72.4
Փողի բազա (ժամ.միջին), մլրդ դրամ	75.9	74.4
Փողի բազմարկիչ (ժամ. վերջ)	2.22	2.2
Դրամային բազմարկիչ (ժամ. վերջ)	1.07	1.08

Եռամսյակի ընթացքում հատկապես էական շեղում է արձանագրվել փողի զանգվածի գծով՝ ծրագրված 0.9%-ի փոխարեն 5% նվազում (8.6 մլրդ դրամ), իսկ դրամային զանգվածի փաստացի ցուցանիշը եռամսյակի վերջում գրեթե համընկել է ծրագրվածին. գրանցվել է նախատեսված կրճատումը (5.0 մլրդ դրամ): Փողի զանգվածի կառուցվածքում, ինչպես և նախորդ տարիներին, հիմնականում նվազել է շրջանառության մեջ եղած կանխիկը, որը անցած տարեվերջին կանխիկի մեծածավալ աճի հետադարձ հոսքն է բանկային համակարգ՝ պայմանավորված առաջին եռամսյակին բնորոշ գործարար պասիվությամբ:

Փողի պահանջարկի կրճատումն անդրադարձել է նաև արտարժութային ավանդների վարքագծի վրա, որոնք եռամսյակի ընթացքում նվազել են ավելի քան 3.7 մլրդ դրամով: Ընդ որում, վերջին 5 տարիներին սա առաջին դեպքն է, որ տարեսկզբին բանկային համակարգում արտարժութային միջոցների նվազում է արձանագրվում: Դա հիմնականում կարելի է բացատրել համակարգում առաջացած մի շարք կարճաժամկետ խնդիրներով: Միևնույն ժամանակ, էապես փոխվել է բանկերում արտարժութային ավանդների ժամկետային կառուցվածքը. ժամկետային ավանդները նվազել են մոտ 10.0 մլրդ, իսկ ցպահանջը՝ աճել ավելի քան 6.0 մլրդ դրամով, ինչի հետևանքով ցպահանջ արտարժութային ավանդների տեսակարար կշիռն արտարժութային ավանդների ընդհանուր ծավալում 43%-ից բարձրացել է 53%-ի, իսկ ժամկետայինինը՝ համապատասխանաբար նվազել 10 տոկոսային կետով:


Դրամային ավանդները համեմատաբար կայուն վարքագիծ են դրսևորել՝ ավելանալով մոտ 1.3 մլրդ դրամով, ընդ որում՝ հիմնականում ի հաշիվ ժամկետային ավանդների:

Այդուհանդերձ, փողի զանգվածի նշված շարժերը գրեթե չեն փոխել կառուցվածքային համամասնությունները. պահպանվում է արտարժութային ավանդների մեծ տեսակարար կշիռն ընդհանուր փողի զանգվածում՝ 51%, որին հաջորդում է շրջանառությունում գտնվող կանխիկը՝ միջին հաշվով 37%, և միայն 12%-ն են կազմում դրամային ավանդները:



Եթե փողի զանգվածի շարժերը դիտարկենք ըստ ամիսների, ապա, ինչպես ակնկալվում էր, կտրուկ նվազում է տեղի ունեցել հունվարին՝ բացառապես շրջանառության մեջ եղած կանխիկի հաշվին, իսկ այնուհետև փետրվար-մարտին, նույն այդ բաղադրատարրի աճի և արտարժութային ավանդների նվազման արդյունքում, փողի զանգվածն աննշան աճել է:


Փողի շրջապտույտի արագության միջին եռամսյակային ցուցանիշը կազմել է 1.74 (ծրագրվածը՝ 1.82), իսկ դրամի շրջապտույտի արագությունը՝ 3.56 (ծրագրվածը՝ 3.79): Այս ցուցանիշների՝ ծրագրվածի



համեմատ ցածր արդյունքներ են գրանցվել, քանի որ համախառն պահանջարկի զգալի զսպման հետևանքով տնտեսությունում ավելի դանդաղ աճի տեմպեր են արձանագրվել, քան այդ ընթացքում նվազել է փողի և դրամի պահանջարկը: Ընդ որում, այս տարվա առաջին եռամսյակում ևս պահպանվել է նախորդ տարիներին դրսևորված սեզոնայնությունը, այն է՝ նախորդ եռամսյակի համեմատ նվազում:

ՓՈՂԻ ԱՌԱՋԱՐԿ

Բանկային համակարգի ՁԱԱ-ն ավելացել են մոտ 2.6 մլրդ, իսկ ՁՆԱ-ն՝ նվազել 11.2 մլրդ դրամով: Ի տարբերություն նախորդ տարիների նույն ժամանակահատվածի, երբ բանկային համակարգի արտարժութային պահուստները մշտապես նվազել են, 2002 թ. դրանք ունեցել են աճի ուղղվածություն: Ձևավորված օրինաչափությունը խախտվել է առևտրային բանկերի ՁԱԱ շարժերի հետևանքով, որոնք նախորդ տարիներին առավելապես արծանագրված նվազման փոխարեն այս տարի հանգեցրել են 5.7 մլրդ դրամով աճի: Դա պայմանավորվել է արտաքին պարտավորությունների մարմամբ՝ ԿԲ-ից գնված արտարժույթի հաշվին և ռեզիդենտների կողմից արտարժութային վարկերի մարմամբ: ԿԲ ՁԱԱ-ը պահպանել են նախորդ տարիների միտումները՝ եռամսյակի ընթացքում նվազելով 3.1 մլրդ դրամով (շարժերը կնկարագրվեն «Փողի բազա» ենթաբաժնում):



Առաջին եռամսյակում, վերջին 3 տարիների համեմատ, զգալի փոփոխություններ են կատարվել բանկային համակարգի ՁՆԱ կառուցվածքում: Այսպես, ամենախոշոր փոփոխությունները տեղի են ունեցել տնտեսության և բանկային համակարգի փոխհարաբերություններում՝ տնտեսության զուտ պարտավորությունների 14.5 մլրդ դրամի նվազում: Վերջինս հիմնականում հետևանք էր էներգետիկ համակարգի կողմից բանկային համակարգի միջոցով արտաքին պարտավորությունների մարման և բանկերի կողմից անհուսալի վարկերի դուրսգրման (19.4 մլրդ դրամ ընդհանուր գումարով), որը մոտ 4.9 մլրդ դրամով չեզոքացվել է նոր վարկերի տրամադրմամբ: Եթե նշված նվազումը հաշվի չառնենք, ապա առաջին եռամսյակում համակարգի կողմից տնտեսության վարկավորման աճը կազմել է 4.8%, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում դիտվել է այդ ցուցանիշի նվազում 1.4%-ով, այսինքն՝ կարելի է արձանագրել, որ գործարար պասիվության այս փուլում գրանցվել են տնտեսության ֆինանսավորման բավականին բարձր աճի տեմպեր:

Ընդ որում, ինչպես մարումների ու դուրսգրումների, այնպես էլ նոր տրամադրված վարկերի գերակշիռ մասը բաժին է ընկել արտարժութային վարկերին, որոնք էլ հիմնականում ուղղված են եղել մասնավոր հատվածին:

Ի տարբերություն նախորդ տարիների աճի, առաջին եռամսյակի ընթացքում ավելի քան 3.0 մլրդ դրամով նվազել են նաև ֆակտորինգային գործառնությունները, որոնցում ևս մեծ տեսակարար կշիռ են կազմել արտարժութային գործարքները:

Բանկային համակարգի ՁՆԱ-ում հաջորդ էական փոփոխությունը տեղի է ունեցել այլ զուտ ակտիվների մասով՝ 10.5 մլրդ դրամի աճ՝ պայմանավորված հետևյալ գործոններով. բանկերի հաշվեկշիռներից վատորակ վարկերի դուրսգրումները, ԿԲ նախորդ տարվա շահույթի մի մասի՝ պետբյուջե փոխանցումը և այլն:

Եվ վերջապես, Կառավարության նկատմամբ բանկային համակարգի զուտ պահանջների ցուցանիշը եռամսյակի ընթացքում նվազել է 7.3 մլրդ դրամով, որը բացառապես տեղի է ունեցել Կառավարության հանդեպ ԿԲ զուտ պահանջների նվազման հաշվին, ինչը ևս կմեկնաբանվի «Փողի բազա» ենթաբաժնում: Առևտրային բանկերի նկատմամբ Կառավարության պարտավորությունները ավելացել են 1.9

մլրդ դրամով, ինչը արդյունք է բանկերի կողմից առաջնային շուկայում պետարժեթղթերի ձեռքբերման հաշվին իրենց արժեթղթերի պորտֆելների համալրման:


Ընդ որում, առաջարկի տեսանկյունից ևս հիմնական շարժերը բաժին են ընկել տարվա առաջին ամսվան, իսկ հաջորդ երկու ամիսներին բանկային համակարգի կողմից իրականացված ակտիվային գործարքների ծավալներն ավելի փոքր են եղել:

ՓՈՂԻ ԵՎ ԴՐԱՄԱՅԻՆ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

Փողի բազմարկչի գործոնային վերլուծության արդյունքներով՝ առաջին եռամսյակի ընթացքում գրանցվել է ցուցանիշի 2.2 մակարդակ[1], որը փոքրինչ բարձր է նախորդ եռամսյակի համեմատ, սակայն ծրագրով ակնկալվող ցուցանիշից ցածր է 0.02 կետով: Շեղումը կարելի է բացատրել հիմնականում ազդեցության երկու գործոնների փոփոխություններով. նախ՝ արտարժութային ավանդները, ինչպես արդեն նշվել է, անցած երեք ամիսներին նվազել են, այնինչ, հաշվի առնելով անցած տարիների առաջին եռամսյակներում դրանց ցուցաբերած աճի միտումները՝ այս տարի ևս ակնկալվում էին աճի դրսևորումներ: Փողի բազմարկչի աճը զսպող մյուս գործոնը իրացվելիության ավելցուկի բարձր մակարդակն էր գրեթե ամբողջ եռամսյակի ընթացքում:

Նշված երկու գործոնների ազդեցությունն ավելի մեծ կլիներ, եթե չդիտվեր դրամով ժամկետային ավանդների աճ և ոչ ռեզիդենտների արտարժութային ավանդների նվազման հետևանքով պահուստավորման բազայի կրճատում:

Արձանագրվել է դրամային բազմարկչի՝ ծրագրվածից բարձր ցուցանիշ՝ 1.07-ի փոխարեն 1.08, և նախորդ եռամսյակի համեմատ 0.02 կետով աճ, քանի որ ավելցուկային իրացվելիության նվազեցնող ազդեցության պայմաններում դրամային բազմարկչի աճը մեծապես ապահովվել է դրամով ժամկետային ավանդների ավելացման հաշվին:



ՓՈՂԻ ԲԱԶԱ


Ելնելով առաջին եռամսյակի դրամավարկային քաղաքականության ծրագրի տրամաբանությունից, ըստ որի կանխատեսվում էր տնտեսական ակտիվության սեզոնային անկում, տարվա համար սպասվող մեծածավալ արտաքին ֆինանսական ներհոսքի՝ եռամսյակին բաժին ընկնող ծավալների ստացում, տարեսկզբին ԿԲ-ն ակնկալում էր փողի պահանջարկի սեզոնային նվազում, որին համապատասխան ծրագրել էր փողի բազայի կրճատմանն ուղղված դրամավարկային քաղաքականություն: Ընդ որում, քանի որ սպասվող ինքնավար հոսքերի լիարժեք ստերիլացումը կարող էր ֆինանսական շուկայում հանգեցնել գնային ցուցանիշների կտրուկ աճի, փողի բազան եռամսյակի ընթացքում պետք է կառավարվեր տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանագծի շրջանում:

Այս տարվա առաջին եռամսյակում ևս դրամավարկային ցուցանիշների վրա տնտեսության տարբեր հատվածների ազդեցության՝ նախկինում դիտված աննորոշություններն հիմնականում պահպանվել են, և ձևավորվել են ակնկալվող ցուցանիշներից բավականին տարբերվող արդյունքներ: Քննարկենք դրանք հատված առ հատված:

Արտաքին հատվածից սպասվող հոսքերն ամբողջությամբ չեն ստացվել. Համաշխարհային բանկի կողմից Հայաստանին տրամադրվել է ԿԲՎ-4-ի հերթական մասնաբաժինը՝ 14.3 մլն դոլար գումարով, Լինսի հիմնադրամից ստացվել է եռամսյակի համար նախատեսված դրամաշնորհի ընդհանուր ծավալի


[1] *Փողի և դրամային բազմարկիչները եռամսյակային միջին ցուցանիշներ են, որոնք հաշվարկվել են որպես եռամսյակի միջին ամսական ցուցանիշների միջին թվաբանական:*

միայն 26%-ը, իսկ Պարենային անվտանգության ծրագրի դրամաշնորհի ստացումը տեղափոխվել է հաջորդ եռամսյակ: Նման պայմաններում ԿԲ-ն պասիվ է եղել արտարժույթի վաճառքի ստերիլիզացնող գործիքի կիրառման առումով և իրականացրել է ընդամենը 6.1 մլրդ դրամին համարժեք արտարժույթի վաճառք՝ հիմնականում արտաքին պարտքի սպասարկման համար բանկերի կողմից ներկայացված պահանջարկը բավարարելու նպատակով: Արդյունքում՝ ՀՀ ԿԲ ԶԱԱ-ը եռամսյակի ընթացքում նվազել են 3.1 մլրդ դրամով և մարտի 31-ի դրությամբ կազմել մոտ 81.8 մլրդ դրամ՝ ծրագրված 77.9 մլրդ դրամ նվազագույն ցուցանիշի փոխարեն:



Անորոշություններն ու առանձնահատկությունները առավել ընդգծված են դրսևորվել ՀՀ ԿԲ ԶՆԱ կառուցվածքային տարրերի վարքագծում, ինչի հետևանքով ծրագրված 1.8 մլրդ դրամ աճի փոխարեն նվազել են մոտ 5.0 մլրդ դրամով՝ եռամսյակի վերջին հասնելով –9.4 մլրդ դրամի: Դա հատկապես վերաբերում է դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացմանը՝ պայմանավորված պետբյուջեի կատարման ընթացքով, որտեղ էական շեղումներ են առաջացրել վերոնշյալ արտաքին հոսքերը: Մասնավորապես, պետբյուջեի պակասուրդի ֆինանսավորման համար ստացված արտաքին վարկի նախորդ տարվա մասնաբաժինը մեծամասամբ ծախսվել է չնախատեսված արտաքին պարտքի սպասարկման նպատակով, մինչդեռ «ՀՀ 2002թ. դրամավարկային քաղաքականության ծրագրով» նախատեսված էր այդ գումարն ուղղել նախորդ տարիների կուտակված պարտքերի մարմանը:

Ամսվա ընթացքում հարկերի հավաքագրման անհամաչափ բաշխվածությունը առաջին եռամսյակում առավել ընդգծված է եղել, որի հետևանքով յուրաքանչյուր ամսվա վերջին օրերին Գանձապետարանի միասնական հաշվում կուտակվել է խոշոր մնացորդ՝ կտրուկ նվազեցնելով ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշը, հետևաբար և փողի բազան: Այս օրինաչափությունը խիստ կարճաժամկետ համարելով՝ ԿԲ-ն չի փորձել այն հարթել և, եթե անտեսենք փողի բազայի կտրուկ փոփոխությունները ամսվա վերջին ու հաջորդ ամսվա առաջին օրերին, ապա կարելի է փաստել, ինչը և ակնկալվում էր, որ փողի բազան հիմնականում կառավարվել է տատանման միջակայքի միջնագծից վերև:




Բանկերի հետ փոխհարաբերություններն առաջին եռամսյակում ձևավորվել են՝ հիմնականում հաշվի առնելով բանկային համակարգում առկա իրացվելիության մակարդակը և դրա վարքագիծը: Այդ


ժամանակահատվածում բանկերը մշտապես տնօրինել են իրացվելիության ավելցուկի բարձր մակարդակի, որի պարագայում բավականին ակտիվ հանդես են եկել ԿԲ-ում միջոցներն ավանդադնելու նախաձեռնությամբ: Միևնույն ժամանակ, իրացվելիության ավելցուկը կրճատելու նպատակով, ԿԲ-ն կիրառել է արտարժույթի վաճառքի (6.1 մլրդ դրամ) և երկրորդային շուկայում արժեթղթերի վաճառքի (1.8 մլրդ դրամ) ներքաշող գործիքներ:

Ինչ վերաբերում է ԿԲ հանդեպ բանկերի զուտ պարտավորություններին, ապա, ըստ եռամսյակի ծրագրի, դրանք պետք է աճեին առավելապես Վերականգնման վարկերի բանկի (KfW) վարկերի հաշվին: Սակայն վերջիններիս զուգահեռ, եռամսյակի ընթացքում «Արդշինբանկ» ԲԲԸ-ի և «Ադանա բանկ» ՍՊԸ-ի միավորումից հետո ֆինանսական առողջացման ծրագիր իրականացնելու նպատակով, ԿԲ կողմից տրամադրվել է մոտ 2.4 մլրդ դրամի համակարգային վարկ:

Արդյունքում, բանկերի զուտ պարտավորություններն աճել են 2.7 մլրդ դրամով՝ ծրագրված 800 մլն դրամի փոխարեն:

ՀՀ ԿԲ ակտիվային գործառնություններն իրենց համապատասխան արտացոլում են գտել փողի բազայի կառուցվածքային տարրերի վարքագծում: Այսինքն՝ այդ ցուցանիշները ևս ենթարկվել են սեզոնային դրսևորումների և ինքնավար հոսքերի ազդեցությանը, որն առավել մեծ է եղել հունվարին: Ժամանակահատվածի վերջի արդյունքներով՝ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամը և բանկերի թղթակցային հաշիվները եռամսյակի ընթացքում նվազել են համապատասխանաբար 5.9 մլրդ և 2.2 մլրդ դրամով: Մինչդեռ, եթե հետևենք եռամսյակի ընթացքում տեղի ունեցած շարժերին, ապա կարելի է նկատել, որ կանխիկի սեզոնային նվազումն հիմնականում ուղեկցվել է թղթակցային հաշիվների համալրմամբ, և միայն ամիսների վերջին օրերին՝ պայմանավորված հարկահավաքման մեծ ծավալներով, դիտվել է անկանխիկ իրացվելիության կտրուկ անկում:






Բանկերի ավելցուկային իրացվելիության միջին մակարդակը եռամսյակի կտրվածքով կազմել է 2.1 մլրդ դրամ, որը զգալի գերազանցել է նախորդ երկու տարվա նույն ժամանակահատվածների ցուցանիշը (2000 թ. առաջին եռամսյակի միջին ցուցանիշը՝ 556 մլն, 2001-ինը՝ 942 մլն դրամով): Ավելցուկ պաշարների բարձր մակարդակի ձևավորումն ու պահպանումը կարելի է մեկնաբանել մի շարք գործոններով.


- ՀՆԱ-ի՝ ծրագրվածի համեմատ ցածր աճի տեմպերի արձանագրումը, որի պայմաններում ԿԲ-ն ավելի դանդաղ տեմպերով է կրճատել փողի բազան:
- Բանկային համակարգի կողմից տնտեսության վարկավորման աճի տեմպերի դանդաղումը՝ նախատեսված 2.2%-ի փոխարեն ցուցանիշը նվազել է 15%-ով:

- Համակարգում ծագած կարճաժամկետ ֆինանսական խնդիրների հետևանքով արտարժութային ավանդների որոշակի ծավալի արտահոսքը համակարգից և արդյունքում՝ պահուստավորման բազայի նվազումը:
- Ամսվա ընթացքում բյուջետային հարկերի հավաքագրման անհամաչափ բաշխվածությունը:

Այդուհանդերձ, չնայած եռամսյակի ընթացքում ավելցուկային իրացվելիության միջին հաշվով բարձր մակարդակի առկայությանը, ամիսների ընթացքում այն ցուցաբերել է տատանողական վարքագիծ՝ կապված բյուջեի կատարման օրինաչափությունների հետ: Այսպես, իրացվելիությունը զգալի նվազել է ամիսների վերջին օրերին, երբ թղթակցային հաշվի միջոցներից հարկային խոշոր մուտքեր են փոխանցվել Գանձապետարանի միասնական հաշվին, և աճել է հաջորդ ամիսների սկզբին, երբ Կառավարությունը դրանք սկսել է ծախսել:

Առաջին եռամսյակի ընթացքում ԿԲ կողմից իրականացված դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը գնահատվել է երկու մեթոդի՝ դրամավարկային կանոնների[2] և դրամավարկային պայմանների ինդեքսի[3] հաշվարկման միջոցով: Առաջին մեթոդի արդյունքները ցույց են տալիս, որ փողի բազայի կառավարումն իրականացվել է դրամավարկային կանոնով գնահատված մեծությանը բավականին մոտ, և փաստացի ցուցանիշի գերազանցումը ծրագրվածից հիմնականում վկայում է առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականության մասին: Այլ խոսքով ասած, անվանական ՀՆԱ միտումներին համապատասխան ԿԲ կողմից փողի առաջարկի կառավարումը հանգեցրել է նրան, որ փողի շրջապտույտի արագության ձևավորված մակարդակը առավելագույնս մոտ է եղել բնականոն մակարդակին, որի հաշվարկման հիմքում նախորդ տարիներին փողի շրջապտույտի արագության դրսևորած վարքագծի միտումներն են:





[2] *Դրամավարկային կանոնների հաշվարկման մեթոդաբանությունը հրապարակված է ՀՀ 2002 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրում, առանձին հավելվածով:*

[3] *Դրամավարկային պայմանների ինդեքսի հայեցակարգը հրապարակված է 2001 թվականի 2-րդ եռամսյակի «ԿԲ բանբերում»:*


Դրամավարկային պայմանների ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած անվանական ցուցանիշների վարքագիծը ևս հիմնավորում է իրականացված դրամավարկային քաղաքականության առավել ընդլայնողական բնույթը, քանի որ եռամսյակի ընթացքում դիտվել է անվանական տոկոսադրույքների զգալի նվազում և անվանական փոխարժեքի արժեզրկում: Սակայն, այս պայմաններում ԴՊԻ նվազում չի արձանագրվել[4], դեռ ավելին, այն փոքր-ինչ բարձրացել է, որը հիմնականում պայմանավորվել է նշված գնային ցուցանիշների իրական մեծությունների հակառակ միտումների դրսևորմամբ: Վերջինս էլ տեղի է ունեցել սղաճի ձևավորված ցածր մակարդակի հետևանքով, որի հիմնական պատճառները, ինչպես արդեն նշվել է, կապված են եղել տնտեսության այլ հատվածներում դրսևորված զարգացումների հետ:


Այդուհանդերձ, փոխանցման մեխանիզմի գործունեության տեսանկյունից եռամսյակի ընթացքում իրականացված առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականությունը չի նպաստել համախառն պահանջարկի խթանմանը և չի ուղեկցվել գների աճի ավելի արագ տեմպերով, այլ, որպես ավելցուկային իրացվելիություն, կուտակվել է համակարգում՝ հանգեցնելով փողի շրջապտույտի արագության՝ ծրագրվածի համեմատ ցածր մակարդակի ձևավորմանը:

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ

2002 թվականի առաջին եռամսյակի ընթացքում բանկային համակարգի իրացվելիության ավելցուկի պահպանված բարձր մակարդակի էական դրսևորումներից էր նաև ֆինանսական շուկայում տոկոսադրույքների շարունակական նվազումը: Դա առավել ցայտուն է արտահայտվել պետպարտատոմսերի հատվածում, որտեղ թողարկված բոլոր ժամկետայնության արժեթղթերի գծով արձանագրվել է առնվազն 2 տոկոսային կետով նվազում: Ընդ որում, տեղաբաշխման ընդհանուր ծավալում շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել 6 - 9 և 9 - 12-ամսյա արժեթղթերը, որոնց եկամտաբերությունը նվազել է՝ համապատասխանաբար 16-ից 12.8%-ի և 16.4-ից 13%-ի:

Եռամսյակի ընթացքում դրսևորված առանձնահատկություններից հարկ է նշել երկրորդային շուկայում հատկապես կարճաժամկետ տոկոսադրույքների զգալի նվազումը՝ պայմանավորված ավելցուկային իրացվելիության կարճաժամկետ բնույթով: Այսպես, մինչև 28-օրյա պարտատոմսերի եկամտաբերությունը տարեսկզբի 15%-ից եռամսյակի վերջին հասել է 6.5%-ի, այն դեպքում, երբ 6 ամսից ավելի ժամկետայնության պարտատոմսերի եկամտաբերությունը տատանվել է 13 - 16%-ի սահմանում:






[4] *ԴՊԻ հաշվարկում տոկոսադրույքները և փոխարժեքը ներառվում են իրական արտահայտությամբ, քանի որ դրանց փոփոխություններն են հիմնականում պայմանավորում ամբողջական պահանջարկի վարքագիծը:*


Տարեսկզբից տոկոսադրույքների նվազման միտումները շարունակվել են նաև ֆինանսական շուկայի վարկային և ավանդային հատվածներում, սակայն վերջինում դրանց տեմպերն ավելի արագ են եղել՝ 1.7 տոկոսային կետ՝ վարկերի տոկոսադրույքների 1.1 տոկոսային կետով նվազման համեմատ: Արդյունքում՝ տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների տոկոսադրույքների տարբերությունը (սպրեդը) եռամսյակի ընթացքում փոքր-ինչ մեծացել է. դրամային շուկայում 12.1-ից հասել է 13.1%-ի, արտարժութային հատվածում՝ 17.3-ից 17.9%-ի:

Ինչպես նշվել է, առաջին եռամսյակում ԿԲ-ն պասիվ մասնակցություն է ունեցել դրամային շուկայում, և ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները ԿԲ խորհրդի կողմից վերանայվել են հիմնականում շուկայական տոկոսադրույքների միտումներին համապատասխանեցնելու և որոշակի ազդակներ հաղորդելու նպատակով: Վերջինս իրականացվել է ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքի իջեցման միջոցով՝ տարեսկզբի 15%-ից եռամսյակի վերջին հասցնելով 13.5%-ի, որին զուգահեռ իջեցվել է երկրորդային շուկայում արժեթղթերի առքուվաճառքի տոկոսադրույքը՝ 16%-ից 14.5%-ի:

2002 թվականի առաջին եռամսյակում շարունակվել են ֆինանսական շուկայում տոկոսադրույքների սահուն անկման միտումները՝ հիմնականում պայմանավորված բանկերի բարձր իրացվելիությամբ: Այդ է վկայում նաև Կենտրոնական բանկի ավանդների նկատմամբ ձևավորված մեծ պահանջարկը: Մասնավորապես, արձանագրվել է առևտրային բանկերի կողմից ներգրավված ինչպես դրամային, այնպես էլ ԱՄՆ դոլարով ավանդների տոկոսադրույքների անկում՝ համապատասխանաբար կազմելով մոտ 15.5% և 10 %:




Ավելի դանդաղ տեմպերով, սակայն նվազման միտում են դրսևորել նաև առևտրային բանկերի կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքները՝ 27%:



Տոկոսադրույքների անկում է գրանցվել ինչպես ՊՊ առաջնային և երկրորդային, այնպես էլ միջբանկային ռեպո շուկաներում: Այսպես, առաջին եռամսյակի ընթացքում, հիմնականում պայմանավորված առևտրային բանկերի բարձր իրացվելիությամբ, ՊՊ երկրորդային շուկայում նկատվել է իրականացված գործառնությունների ծավալների զգալի կրճատում: Նախորդ եռամսյակի համեմատությամբ գործառնությունների ծավալները նվազել են շուրջ 6 մլրդ դրամով՝ կազմելով 10.6 մլրդ դրամ: Երկրորդային շուկայի միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 670 մլն դրամ: Միևնույն ժամանակ, գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը նվազել է ավելի քան 3 տոկոսով՝ կազմելով 13.88%:

Ընդհանուր առմամբ, հաշվետու եռամսյակում, նախորդ եռամսյակի վերջի համեմատ, ՊՊ երկրորդային շուկայում գրանցվել է եկամտաբերությունների ընդհանուր նվազում 3 - 4 տոկոսով: Սակայն եկամտաբերության սփոթ կորի աճող թեքվածությունը խոսում է այն մասին, որ, այնուամենայնիվ, կարելի է սպասել եկամտաբերությունների ընդհանուր մակարդակի աճ:




Եռամսյակի ընթացքում կրճատվել են պետական արժեթղթերում ռեզիդենտ ոչ բանկ ներդրողների ներդրումների ծավալները: Վերջիններիս պատկանող պարտատոմսերի տեսակարար կշիռը նվազել է 7.13 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջին կազմելով 4371 մլն դրամ: Ոչ ռեզիդենտներին պատկանող ՊՊ ծավալներն ավելացել են մոտ 2.34 տոկոսային կետով:

Արդյունքում՝ մարտի 31-ի դրությամբ ռեզիդենտներին պատկանող պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմել է շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ամբողջ ծավալի մոտ 89.51%-ը՝ 31883.4 մլն դրամ, իսկ ոչ ռեզիդենտներինը՝ 10.49%-ը կամ 3736.6 մլն դրամ:


Ծավալների կրճատում է արձանագրվել նաև ռեպո միջբանկային շուկայում:

Նախորդ եռամսյակի համեմատ գործառնությունների ծավալները նվազել են 3.5 մլրդ դրամով՝ կազմելով մոտ 14 մլրդ դրամ:




Միջբանկային ռեպո շուկայի միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 1.1 մլրդ դրամ: Գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը նույնպես նվազել է շուրջ 3 տոկոսով՝ կազմելով 12.03 %:


ՊՊ առաջնային տեղաբաշխումները իրականացվել են ձևավորված բարձր պահանջարկի պայմաններում. կազմել են թողարկման ծավալի ավելի քան 290%-ը՝ ուղեկցվելով տոկոսադրույքների աստիճանական անկմամբ: Հունվարին ՊՊ միջին տարեկան եկամտաբերությունը կազմել է 14.38%, փետրվարին՝ 13.83%, մարտին՝ 12.96%:



2002 թ. առաջին եռամսյակի ընթացքում իրականացվել է պետական կարճաժամկետ պարտատոմսերի 13 թողարկում՝ 8.9 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, որից 500.0 մլն դրամը՝ 92 - 182 օր շրջանառության ժամկետով, 2.1 մլրդ դրամը՝ 183 - 273 օր շրջանառության ժամկետով, 6.3 մլրդ դրամը՝ 274-364 օր շրջանառության ժամկետով և պետական միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի 1 թողարկում՝ 1.6 մլրդ դրամ ընդհանուր ծավալով:




Արդյունքում՝ մարտի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալը, նախորդ ժամանակահատվածի համեմատ, աճել է 2593.19 մլն դրամով՝ կազմելով 35620.0 մլն դրամ[1]:



[1] *Պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալում ներառված են նաև 1 մլրդ դրամ ծավալով արժեկտրոնային պարտատոմսեր:*

Պայմանավորված շուկայում առկա ավելցուկային իրացվելիությամբ և ՀՀ ԿԲ կողմից վարվող դրամավարկային քաղաքականության դրույթներով, ինչպես նաև ֆինանսական շուկայում տոկոսադրույքների ընդհանուր նվազմամբ՝ 2002 թվականի առաջին եռամսյակում փողի բազայի ծրագրային ցուցանիշները ապահովելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը իրականացրել է հետևյալ գործառնությունները: Հունվար և մարտ ամիսներին վաճառվել է մոտ 1748 մլն դրամի արժեթուղթ՝ 15.43 միջին կշռված եկամտաբերությամբ: Ընդ որում, արժեթղթերի երկրորդային շուկայի տոկոսադրույքների անկման միտմանը զուգահեռ, եռամսյակի ընթացքում նվազել են նաև ՀՀ ԿԲ կողմից իրականացվող՝ արժեթղթերի առք ու վաճառքի գործառնությունների տոկոսադրույքները՝ հունվարին ձևավորված տարեկան 16%-ի նկատմամբ եռամսյակի վերջին այն կազմել է 14.5%:


Առաջին եռամսյակում ԿԲ-ն ձեռնպահ է մնացել ռեպո գործառնություններ իրականացնելուց, սակայն ԿԲ ռեպո տոկոսադրույքը 15%-ից եռամսյակի վերջում իջեցվել է 13.5%-ի:



Բավական բարձր էր ԿԲ ներքաշող մշտական հնարավորության գործիքի նկատմամբ պահանջարկը: Մասնավորապես, ՀՀ կենտրոնական բանկին առաջին եռամսյակում ներկայացվել է 8474 մլն դրամի ավանդի պահանջարկ, ընդ որում՝ հունվարին ներդրվել է 1780 մլն դրամի ավանդ՝ սահմանված 8% եկամտաբերությամբ, փետրվարին տոկոսադրույքները նվազեցվել են 8%-ից մինչև 6%, և ամսվա ընթացքում, տարեկան միջին կշռված 6.71%-ով, ներդրվել է 4524 մլն դրամի ավանդ: Իսկ մարտին, արդեն 6%-ով ներդրվել է 2170 մլն դրամի ավանդ:

Վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ առաջին եռամսյակում բավականին ցածր էր պահանջարկը լոմբարդային վարկերի նկատմամբ: Եռամսյակի ընթացքում միայն մեկ բանկ է ներկայացրել վարկի պահանջարկ (մոտ 250 մլն դրամի՝ սահմանված տարեկան 28% եկամտաբերությամբ):


Կենտրոնական բանկը հաշվետու ժամանակահատվածում արտարժույթի միջբանկային շուկայում իրականացրել է ընդամենը երկու ուղղակի վաճառքի գործարք՝ հունվար և փետրվար ամիսներին վաճառել է 2.05 մլն և 8.70 մլն ԱՄՆ դոլար՝ համապատասխանաբար 564.60 և 567.60 դրամ փոխարժեքներով:



ՀՀ կենտրոնական բանկի կողմից ԱՄՆ դոլարի նկատմամբ սահմանված ՀՀ դրամի փոխարժեքը 2002 թ. առաջին եռամսյակում ունեցել է հաստատուն նվազման միտում՝ արժեզրկվելով 2.63%-ով: Այսպես՝ եռամսյակի սկզբում դրամի փոխարժեքը կազմել է 561.81 դրամ, վերջում՝ 576.96 դրամ (վարիացիա՝

16.89, միջին շեղում՝ 4.11 դրամ), իսկ միջբանկային շուկայում նույն ժամանակահատվածում ձևավորված դրամի փոխարժեքը 565.15 դրամից նվազել է 577.51 դրամի:

Արժութային շուկայում ձևավորվել են ԱՄՆ դոլարի առքի և վաճառքի գործառնությունների հետևյալ ծավալները: Երեք ամսվա ընթացքում առքի ծավալները համապատասխանաբար կազմել են՝ 25.152 մլն, 58.785 մլն և 42.176 մլն ԱՄՆ դոլար, վաճառքինը՝ 27.062 մլն, 59.107 մլն և 39.208 մլն ԱՄՆ դոլար: Միջին կշռված փոխարժեքները համապատասխանաբար կազմել են՝ 565.03 դրամ, 565.43 դրամ և 573.26 դրամ: Արժութային շուկայի համախառն ծավալը կազմել է մոտ 251.5 մլն ԱՄՆ դոլար, միջին կշռված փոխարժեքը՝ 567.82 դրամ (նախորդ տարի նույն ժամանակահատվածում՝ 259.6 մլն ԱՄՆ դոլար, փոխարժեքը՝ 550.26 դրամ):



Առաջին եռամսյակի ընթացքում, որպես Կառավարության ֆինանսական գործակալ, Կենտրոնական բանկը ՀՀ կառավարությունից գնել է 1.001 մլն ԱՄՆ դոլար՝ 563.49 դրամ միջին կշռված փոխարժեքով, վաճառել՝ 4.932 մլն ԱՄՆ դոլար՝ 0 564.84 դրամ միջին կշռված փոխարժեքով:

ՀՀ բանկային համակարգի զարգացման հիմնական միտումները

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԸ

2002 թ. Կենտրոնական բանկը շարունակել է բանկային համակարգի առողջացման քաղաքականությունը, որի նպատակն է կայուն բանկային համակարգի ձևավորումը, մրցունակ բանկերի գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, ինչպես նաև բանկային գործունեության ընթացքում առաջացող բազմազան ռիսկերի նվազեցումը: Այս առումով առավել կարևորվում է բանկային նոր օրենսդրության ընդունումը, ինչը Կենտրոնական բանկին հնարավորություն ընձեռեց արագ արձագանքել բանկերի ֆինանսական վիճակի վատթարացմանը: Նշված հանգամանքը կարևորվում է նրանով, որ նախկինում անվճարունակ բանկի նկատմամբ սնանկացման գործընթաց Կենտրոնական բանկը կարող էր սկսել միայն դատարանի որոշմամբ, ինչը սովորաբար պահանջում էր բավական երկար ժամանակ (մինչև մեկ տարի), կամ որոշումը ընդունվում էր խիստ էական փոփոխություններով: Դեկտեմբերի 15-ին նոր բանկային օրենսդրության ընդունումից հետո մեկ ամսվա ընթացքում Կենտրոնական բանկը ժամանակավոր ադմինիստրացիա նշանակեց ֆինանսական ծանր վիճակում գտնվող երկու բանկում, ինչի շնորհիվ հնարավոր եղավ կանխել նշված բանկերի վիճակի հետագա վատթարացումը:

Նոր բանկային օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացված միջոցառումների արդյունքում, 2002 թ. առաջին եռամսյակի ընթացքում լուծարվել է «ՌիԱ-բանկ» ՓԲԸ-ն: ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2002 թ. մարտի 11-ի թիվ 62 որոշման համաձայն՝ միաձուլման արդյունքում «Ադանա» բանկ ՍՊԸ-ն որպես «Արդշինբանկ» ԲԲԸ-ի մասնաճյուղ գրանցելուն զուգահեռ, «Արդշինբանկ» ԲԲԸ-ում, միաձուլման բնականոն գործընթացի ապահովման նպատակով, ՀՀ կենտրոնական բանկի կողմից նշանակվել է ժամանակավոր ադմինիստրացիա և տրամադրվել է համակարգային վարկ:

Արդյունքում, 2002թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 28 բանկեր, որոնցից ութը գտնվել են հատուկ վերահսկողական դաշտում:

Հատուկ վերահսկողական դաշտում գործող բանկերի առողջացման ծրագրերի շրջանակներում շարունակվել է ժամանակավոր ադմինիստրացիայի և խնամակալության գործունեությունը: Այս բանկերի ֆինանսական վիճակի վատթարացման հիմնական պատճառ է դարձել նախկինում մեծ ծավալներով բարձր ռիսկային վարկերի տրամադրումը: Քանի որ այդ վարկերի մեծ մասը ի սկզբանե խնդրահարույց էին և խեղաթյուրում են բանկային համակարգում առկա իրական միտումները, հետագա վերլուծությունը իրականացվել է 01.31.2002թ. դրությամբ գործող 21 առողջ բանկերի տվյալների հիման վրա:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՊԻՏԱԼ

Դիտարկվող ժամանակահատվածում բանկային համակարգի ընդհանուր կապիտալը նվազել է 1.5 %-ով և 31.03.2002թ. դրությամբ կազմել 34.2 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալի նվազման հիմնական պատճառ է հանդիսացել չբաշխված շահույթի 2.4 մլրդ դրամով նվազումը, որի մոտ 50%-ը կազմել է ընթացիկ ժամանակաշրջանի վնասը: Միևնույն ժամանակ, կանոնադրական հիմնադրամը ու գլխավոր պահուստը համապատասխանաբար աճել են 1.4 և 0.5 մլրդ դրամով: Կանոնադրական հիմնադրամի աճի հիմնական մասը (մոտ 74%) բաժին է ընկել ռեզիդենտ ներդրողներին, ինչի արդյունքում ոչ ռեզիդենտների մասնաբաժինը փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամում նվազել է 0.5 տոկոսային կետով և կազմել 55.5%:

Տարվա սկզբի համեմատ գրեթե անփոփոխ է մնացել լրացուցիչ կապիտալի ծավալը (31.03.2002թ. դրությամբ՝ 1.8 մլրդ դրամ), իսկ ընդհանուր կապիտալում հիմնական կապիտալի տեսակարար կշիռը կազմել է 94.5%՝ նախորդ եռամսյակի 94.6%-ի փոխարեն:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը եռամսյակի ընթացքում պահպանվել է բավական բարձր մակարդակի վրա: Չնայած տարվա սկզբի համեմատ կապիտալի համարժեքության $Ն1^1$ և $Ն1^2$ նորմատիվները համապատասխանաբար նվազել են 1.3 և 1.2 տոկոսային կետով, 31.03.2002թ. դրությամբ $Ն1^1$-ը կազմել է 27.8%, իսկ $Ն1^2$-ը՝ 26.4%՝ պահանջվող 12%-ի և 8%-ի փոխարեն:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանում նվազել են 0.1%-ով և 31.03.02 թ. դրությամբ կազմել 170.8 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների նվազումը հիմնականում պայմանավորվել է իրավաբանական և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 21.4%-ով և 0.4%-ով նվազմամբ, որոնց ծավալները 31.03.2002թ. դրությամբ համապատասխանաբար կազմել են 31.6 և 39.4 մլրդ դրամ (մոտ 80%-ը ներգրավված է

ռեզիդենտներից): Ընդ որում, իրավաբանական անձանց ժամկետային ավանդների բավական մեծ նվազումը հիմնականում պայմանավորված է եղել երկու բանկի կողմից նախկինում ստանձնած խոշորածավալ պարտավորությունների մարմամբ: Հատկանշական է, որ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների նվազումը ուղղորդվել է արտարժույթով ներգրավված ավանդների 0.5-ով նվազմամբ, մինչդեռ դրամով ներգրավված ավանդների ծավալն աճել է 0.3%-ով:


Ընդհանուր առմամբ, բանկային համակարգի ժամկետային ավանդների նվազման պատճառներից են ինչպես տնտեսության գործարար աշխուժացումը (այդ մասին է վկայում ցպահանջ պարտավորությունների, բացառությամբ թղթակցային և տարանցիկ հաշիվների, 7.5%-ով աճը՝ 31.03.2002թ. դրությամբ՝ 61.3 մլրդ դրամ), այնպես և որոշ բանկերի կողմից իրականացված քաղաքականությունը՝ ուղղված ժամկետային բանկ միջոցների ծավալների նվազեցմանը: Նշված հանգամանքների ազդեցությունը բանկային համակարգի վրա կարող է արտահայտվել ժամկետային ավանդների շուկաներում ակտիվ գործունեություն ծավալող բանկերի միջև մրցակցության ուժեղացմամբ:

2002 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում 10.1%-ով աճել են բանկերից ստացված վարկերը՝ կազմելով 23.1 մլրդ դրամ, ընդ որում՝ 65.4%-ը կազմել են ոչ ռեզիդենտ բանկերից ստացված վարկերը:

Բանկերից ներգրավված ավանդներն աճելով մոտ 5.6 անգամ՝ կազմել են 6.6 մլրդ դրամ, ընդ որում՝ 97.6%-ը կազմել են ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված ավանդները: Տվյալ աճը համակարգային բնույթ չի կրում և պայմանավորված է հիմնականում մեկ բանկի կողմից ներգրավված միջոցներով:

Ինչպես և նախորդ ժամանակաշրջանում, ներգրավված միջոցների հիմնական մասը (մոտ 80%) ներգրավված է եղել արտարժույթով:

Բանկային համակարգի ներգրավված միջոցների կառուցվածքը



1. Ցպահանջ պարտավորություններ, 2. Վարկեր (ավանդներ) բանկերից, 3. Ֆիզ. անձանց ավանդներ, 4. Իրավ. անձանց ավանդներ, 5. Այլ պարտավորություններ, 6. Վճարվելիք տոկոսներ


ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ

2002 թ. 1-ին եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր ակտիվները նվազել են 0.3%-ով և 31.03.02թ. դրությամբ կազմել 205 մլրդ դրամ: Ընդ որում, ընդհանուր ակտիվների նվազումը ուղղորդվել է վերջիններիս կառուցվածքային փոփոխություններով: Մասնավորապես, բարձր իրացվելի ակտիվներն աճել են 6.8%-ով և կազմել 74.3 մլրդ դրամ (բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների հարաբերակցության ցուցանիշը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 2.4 տոկոսային կետով և 31.03.02թ. դրությամբ կազմել է 36.2%): Բարձր իրացվելի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված էր պետական արժեթղթերում ներդրումների ծավալի 7.2% աճով (31.03.02 թ. դրությամբ՝ 22.6 մլրդ դրամ):

Միևնույն ժամանակ, վարկային ներդրումները նվազել են մոտ 9 մլրդ դրամով (հիմնականում պայմանավորված է երկու բանկերի կողմից նախկինում տրամադրված խոշորածավալ վարկերի մարմամբ, միաժամանակ այդ գումարներն ուղղվել են իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորությունների մարմանը), իսկ վերջիններիս տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվների կազմում 31.03.2002թ. դրությամբ կազմել է 41.9%՝ տարվա սկզբի համեմատ նվազելով 4.2 տոկոսային կետով:

Վարկային ներդրումների նվազումն ուղեկցվել է ժամկետանց վարկերի 24.7% աճով, որոնց մեծությունը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 6 մլրդ դրամ կամ բանկային համակարգի ընդհանուր կապիտալի 17.6%-ը, իսկ երկարածգված վարկերի մեծությունը նվազել է 54.7%-ով և կազմել 4.1 մլրդ դրամ:

Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը



1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթ. հաշվի և պարտադիր պահուստների մնացորդներ
3. Պետական արժեթղթեր
4. Բանկերում տեղաբաշխված ավանդներ (վարկեր)
5. Ավանդներ ԿԲ-ում
6.Վարկեր տնտեսությանը
7. Պահուստաֆոնդ
8. Այլ ակտիվներ
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ
13. Պարտավորություններ հակադարձ ռեպո պայմանագրերի գծով
14. Պարտավորություններ ռեպո համաձայնագրերի գծով

Վարկային ներդրումների՝ ըստ ռիսկի խմբերի դասակարգման արդյունքում, եռամսյակի ընթացքում վարկային պորտֆելում 10.1 տոկոսային կետով աճել է դասակարգված վարկերի տեսակարար կշիռը և կազմել վարկային ներդրումների 15.3%-ը կամ 13 մլրդ դրամ: Դասակարգված վարկերի նման աճը հիմնականում պայմանավորված էր տարվա սկզբից դասակարգման նոր՝ «հսկվող» դասի սահմանմամբ: Արդյունքում, 31.03.02թ. դրությամբ վարկային պորտֆելն ունի հետևյալ կառուցվածքը. «ստանդարտ» վարկերը կազմել են վարկային պորտֆելի 84.7%-ը, «հսկվող» վարկերը՝ 9.9%-ը, «ոչ ստանդարտ» վարկերը՝ 3.7%-ը, «կասկածելի» վարկերը՝ 1.6%-ը:

31.03.02թ. դրությամբ վարկերի հնարավոր կորուստների պահուստի մեծությունը կազմել է վարկային ներդրումների 4.4%-ը՝ նախորդ եռամսյակի 2.5%-ի փոխարեն:

Վարկային ներդրումների նվազման արդյունքում 2002 թ. 1-ին եռամսյակի ընթացքում 7.6%-ով նվազել է եկամտաբեր ակտիվների ծավալը և կազմել 106.4 մլրդ դրամ, իսկ դրանց տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում նվազելով 4.1 տոկոսային կետով՝ կազմել է 51.9%:

Ընդհանուր ակտիվների կառուցվածքի նման փոփոխությունների վրա իր ազդեցությունն է թողել նաև ԿԲ կողմից իրականացվող քաղաքականությունը՝ ուղղված ինչպես առանձին բանկերի, այնպես էլ ընդհանուր բանկային համակարգի առողջացմանը: Բանկային համակարգի, ընդհանրապես տնտեսության զարգացման ներկա փուլում բանկերը ձգտում են բարձր ռիսկային գործունեության ծավալների սահմանափակմամբ ամրապնդել իրենց կայունությունը և արդյունքում բարելավել դիրքերը մրցակիցների նկատմամբ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

31.03.02 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործող բանկերը ստացել են 11.3 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 12.4 մլրդ դրամի չափով ծախսեր: Արդյունքում՝ ընթացիկ տարվա 3 ամիսների գործունեության ընթացքում բանկերի շահույթը (վնասը), հարկումից և հաշվարկված շահաբաժինների նվազեցումից հետո, կազմել է -1.2 մլրդ դրամ:

Պայմանավորված բանկերի ակտիվների կառուցվածքում տեղի ունեցած փոփոխություններով, փոփոխվել է նաև եկամուտների կառուցվածքը: Մասնավորապես, վարկային ներդրումների ծավալների նվազման հետևանքով բանկային համակարգի տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը համախառն եկամուտներում նվազել է 16.4 տոկոսային կետով (համախառն եկամուտների 43.8%-ը), իսկ ծախսերի հաշվին դուրս գրված ակտիվների վերադարձի տեսակարար կշիռն աճել է 16.6 տոկոսային կետով (համախառն եկամուտների 37.7%-ը):

Համախառն ծախսերի կառուցվածքի ձևավորման վրա հիմնականում ազդել են իրավաբանական անձանց ժամկետային ավանդների ծավալների նվազումը և ակտիվների «մաքրմանը» ուղղված բանկերի

քաղաքականությունը: Արդյունքում, տոկոսային ծախսերի կշիռը համախառն ծախսերում նվազել է 9.8 (համախառն ծախսերի 21.3%-ը), իսկ ակտիվների հնարավոր կորուստների պահուստաֆոնդին կատարված մասհանումների կշիռն ավելացել է 16.5 տոկոսային կետով (համախառն ծախսերի 51.1%-ը), որը և հանդիսացել է վնասի հիմնական պատճառ:

2001 թ. գործունեության արդյունքում բանկերի ստացած զուտ տոկոսային եկամուտը (տոկոսային եկամուտների և տոկոսային ծախսերի տարբերությունը) կազմել է 2.3 մլրդ դրամ, իսկ վերջինիս հարաբերակցությունը եկամտաբեր ակտիվներին՝ 2.2%՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 2.4%-ի փոխարեն:

31.03.02թ. դրությամբ շահույթով աշխատել են 12 բանկեր, որոնց չբաշխված շահույթը կազմել է 0.6 մլրդ դրամ: Վնասով աշխատող 9 բանկերի վնասը կազմել է 1.8 մլրդ դրամ, որի 80%-ը բաժին է ընկել մեկ բանկի և պայմանավորված էր բանկի կողմից իրականացվող միջոցառումներով՝ ուղղված ակտիվների դասակարգման ճշգրտմանը՝ համաձայն ակտիվների դասակարգման նոր կարգի:

Վերոնշյալ վնասաբեր բանկերի գործունեության արդյունքը պայմանավորված է հիմնականում ակտիվների հնարավոր կորուստների պահուստաֆոնդին ուղղված մասհանումներով (զուտ տոկոսային և զուտ ոչ տոկոսային եկամուտների՝ 80 մլն դրամի հետ մեկտեղ, զուտ մասհանումները կազմել են 1.9 մլրդ դրամ):

ՀԱՏՈՒԿ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԴԱՇՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐ[1]

Հաշվետու ժամանակաշրջանում հատուկ վերահսկողական դաշտում գտնվող 7 բանկերի ընդհանուր կապիտալը նվազել է 41.5%-ով, տարեվերջին կազմելով –21.4 մլրդ դրամ:


Համախառն ակտիվները նվազել են -18.7%-ով՝ ժամանակաշրջանի վերջին կազմելով 20.8 մլրդ դրամ: Համախառն պարտավորությունները եռամսյակի ընթացքում ունեցել են աճի միտում՝ 3.6% և 31.03.02թ. դրությամբ կազմել են 42.2 մլրդ դրամ: Միևնույն ժամանակ, բանկերը շարունակել են մարել ավանդատուների նկատմամբ ունեցած պարտավորությունները: Եռամսյակի ընթացքում մարված ժամկետային ավանդների ընդհանուր ծավալը կազմել է 530 մլն դրամ, որի 75 %-ը (396 մլն դրամ) կազմել են ֆիզիկական անձանց ավանդները: Բանկերը ավանդները հիմնականում մարել են նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձի հաշվին, որոնց ծավալները եռամսյակի ընթացքում կազմել են 1.5 մլրդ դրամ:

31.03.02թ. դրությամբ հատուկ վերահսկողական դաշտում գտնվող 7 բանկերի ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթը (վնասը) կազմել է -6.3 մլրդ դրամ, որի ձևավորման հիմնական պատճառը առողջացման ծրագրերով նախատեսված՝ վատորակ ակտիվների դուրսգրումն էր:

[1] *Հաշվարկներում ընդգրկված չեն «Արդշինբանկ» ԲԲԸ-ի տվյալները:*

2002 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացվող վճարումները նվազել են, մասնավորապես՝ իրականացված դրամական փոխանցումների շրջանառության միջին օրեկան ծավալը կազմել է մոտ 3.6 մլրդ դրամ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 492 մլն դրամով), իսկ քանակը՝ 2646 (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 44-ով): Միաժամանակ 2001թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել են ընդհանուր վճարումների և՛ քանակը, և՛ ծավալը՝ համապատասխանաբար 26.559 հատ ու 57.0 մլրդ դրամ (օրական կտրվածքով՝ 368 հատ և 822 մլն): Վճարային համակարգերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալի նվազումը հիմնականում պայմանավորված է խնամակալության տակ գտնվող և լուծարվող բանկերի գործունեության պասիվացմամբ, իսկ քանակի նվազումը՝ էլեկտրոնային վճարումների համակարգում բանկերի կողմից խմբային հաղորդագրությունների օգտագործմամբ:

2002 թ. 1-ին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումների կառուցվածքում շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախածեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են եռամսյակի ընթացքում կատարված ընդհանուր վճարումների ծավալի 48%-ը (նախորդ տարվա 1-ին եռամսյակի համեմատ ավելացել է 2 տոկոսային կետով) և քանակի 76%-ը (նախորդ տարվա համեմատ նվազել է 1 տոկոսային կետով):



ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ

CBANet միջբանկային համակարգչային ցանցին միացվել են Միջպետական բանկը (ք.Մոսկվա), ՀՀ տարածքում գործող բանկերի 2 մասնաճյուղ և 31.03.2002թ. դրությամբ CBANet ցանցի բաժանորդների ընդհանուր թիվը կազմել է 222, այդ թվում՝ ցանցի ծառայություններից օգտվել են ՀՀ տարածքում գործող 29 առևտրային բանկեր (գլխամասային բաժանմունքները և 139 մասնաճյուղ), Գանձապետարանը (Կենտրոնական գանձապետարանը և 44 տեղական գանձապետական բաժանմունք), «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը, ՀՀ կենտրոնական բանկի 2 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ պետական եկամուտների նախարարությունը, ՀՀ պետական մաքսային կոմիտեն (3 մաքսատներ) և Հայաստանի բանկերի միությունը:

CBANet միջբանկային համակարգչային ցանցն աշխատել է առանց էական խափանումների: Եռամսյակի ընթացքում արձանագրվել է ցանցի չաշխատելու 15 դեպք՝ հիմնականում կապուղիների հետ կապված հիմնախնդիրների պատճառով:

Իրականացվել են ՀՀ կենտրոնական բանկի պահուստային բանկի՝ CBANet միջբանկային համակարգչային ցանցին միացման, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների (IP տեխնոլոգիաներ) ներդրման համապատասխան հետազոտական աշխատանքներ:

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգին միացվել են նաև Միջպետական բանկը (ք.Մոսկվա), «Յունիբանկը» և մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 199, այդ թվում՝ ընդգրկվել են ՀՀ գանձապետարանն՝ իր 44 բաժանմունքներով և 28 առևտրային բանկեր՝ իրենց 122 մասնաճյուղերով: Հաշվետու ժամանակահատվածում վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով՝ համակարգի մասնակից մեկ առևտրային բանկի կատարած էլեկտրոնային վճարումները միջին հաշվով կազմել են տվյալ բանկի ընդհանուր վճարումների ծավալի 74.1%-ը և քանակի 97.0%-ը:

2002 թ. առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, էլեկտրոնային վճարումների կառուցվածքում (ծավալում՝ 2.59, քանակում՝ 5 տոկոսային կետերով) մեծացել է խմբային վճարումների հաճախարարականներով փոխանցումների տեսակարար կշիռը՝ վճարման անհատական հաճախարարականներով փոխանցումների նվազման հաշվին:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 8-ով՝ կազմելով մոտ 2566, իսկ ծավալը նվազել է 259 մլն դրամով՝ կազմելով 2687 մլն դրամ, ինչը պայմանավորված էր մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալի մոտ 105 հազ. դրամ նվազմամբ, որը կազմել է մոտ 1047 հազ. դրամ:

Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են նախաձեռնված վճարումների ծավալի 0.78%-ը, քանակի 0.08%-ը (135 փոխանցում՝ 1531 մլն դրամ ծավալով), ընդ որում, անբավարար իրացվելիության պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում նախաձեռնված վճարումների ծավալի 0.28%-ը, քանակի 0.02%-ը (33 փոխանցում՝ 482 մլն դրամ ծավալով):

Հաղորդագրության տեսակը	1999	2000	2001	I եռ. 01	IV եռ. 01	I եռ. 02
ՀՏ 100 (Վճարման հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	236657	562399	478783	121684	128045	107922
Քանակ	129508	323511	216563	52966	62065	54296
ՀՏ 120 (Բյուջեի մուտքի հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	64231	112008	118767	32844	28627	28589
Քանակ	198764	409858	364041	87953	87344	78859
ՀՏ 122 (Բյուջե բազմակի փոխանցման հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	11	14	3	0	1
Քանակ	0	120	27	6	6	3
ՀՏ 123 (Բյուջետային վճարման հավաքական հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	251	4047	682	1105	911
Քանակ	0	6153	112721	18710	34724	26163
ՀՏ 131 (Բազմակի փոխանցման հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	140	412	134	71	222
Քանակ	0	65	526	150	93	145
ՀՏ 132 (Հավաքական վճարումների հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	2927	13194	3687	3720	564
Քանակ	0	637	749	95	253	130
ՀՏ 202 (Միջբանկային վճարման հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	24257	150299	29473	45311	33742
Քանակ	0	4288	19430	3836	5204	4659
Ընդամենը						
Գումար (մլն ՀՀ դրամ)	300888	701993	765515	188507	206878	171950
Քանակ	328272	744632	714057	163716	189689	164255

Հաշվետու ժամանակահատվածը հատկանշական է նաև այն փաստով, որ 1997թ. էլեկտրոնային վճարումների համակարգի ներդրման օրվանից առ այսօր, համակարգի միջոցով կատարվել է շուրջ 2 մլն վճարում:

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

2002 թ. առաջին եռամսյակում սկսվել են էլեկտրոնային վճարումների համակարգի զարգացման աշխատանքները, մասնավորապես՝ մշակվել են հաղորդագրությունների փոխանցման առաջնայնության և հերթերի կառավարման սկզբունքների կիրառման հարցերը՝ էլեկտրոնային վճարումների համակարգի նախագծվող տարբերակում ներառելու նպատակով:

ԹՂԹԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2002 թ. 1-ին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային վճարումներ են նախաձեռնել 29 առևտրային բանկեր, ՀՀ գանձապետարանը և ՀՀ կենտրոնական բանկը: Առևտրային բանկերի կողմից թղթային եղանակով կատարված վճարումները միջինը կազմել են վերջիններիս վճարումների ծավալի 11%-ը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 3.5 տոկոսային կետով) և քանակի 0.9%-ը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 0.3 տոկոսային կետով):

Թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական ծավալը, նախորդ տարվա 1-ին եռամսյակի համեմատ, նվազել է 243 մլն դրամով, իսկ քանակը պահպանվել է նույն մակարդակի վրա՝ կազմելով 62 հատ: Վճարումների ծավալի նվազումը պայմանավորված էր մեկ թղթային փոխանցման միջին ծավալի մոտ 4193 հազ. դրամով նվազմամբ, որը կազմել է 10.99 մլն դրամ:

ԶՈՒՏ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով առաջին եռամսյակում զուտ վճարումներ է նախաձեռնել 2 առևտրային բանկ: Մեկ բանկի կողմից զուտ եղանակով կատարված վճարումները վերջինիս վճարումների ծավալային կառուցվածքում կազմել են 1.5%, քանակային կառուցվածքում՝ 1.39%: Հիմք ընդունելով վերը նշված ցուցանիշները և հետազոտելով նախորդ եռամսյակներում դրսևորված միտումները, նկատելի է, որ ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից զուտ վճարումների համակարգով հաշվարկներին տրված նախապատվությունը ամենացածրն է, և բոլոր վճարումները կատարվում են երկրորդ քլիրինգային սեանսի ընթացքում:

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2002 թ. առաջին եռամսյակի ընթացքում ներդրվել և փորձնական շահագործման է հանձնվել Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի ՀՀ պետական (գանձապետական) միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի շրջառառությունը ապահովող ենթահամակարգը: Փորձնական շահագործման նպատակով ենթահամակարգը տեղադրվել է նաև պետական արժեթղթերի շուկայի մասնակից հանդիսացող ՀՀ տարածքում գործող բանկերում: Ենթահամակարգի իրական շահագործումը նախատեսվում է սկսել սույն տարվա երկրորդ եռամսյակի ընթացքում:

2002 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 6 գործակալ և 13 դիլեր բանկեր, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը (թողարկողի կարգավիճակով), Գանձապետական պահառուն և ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով):

Եռամսյակի ընթացքում համակարգի կողմից ձևավորվել է 358 հանձնարարական՝ 16290 մլն ՀՀ դրամ ծավալով:

ՀՀ կենտրոնական բանկին պատկանող վճարային համակարգերի գործունեությունը բնութագրող ցուցանիշներ

Ժամանակահատվածը	Համախառն				Զուտ վճարումների համակարգ		Պետ. արժեթղթ. հաշվառմ. և հաշվարկ. իրակ. համակարգ		Ընդամենը ԿԲ միջոցով	
	էլեկտրոնային		Թղթային							
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
2001 - I եռ.	188507	163716	58991	3883	853	4062	15029	493	263380	172154
տեսակարար կշիռը վճարումներում (%)	71.6	95.1	22.4	2.3	0.3	2.4	5.7	0.3	100	100
2001 – II եռ.	184539	170512	57633	3354	451	2229	18696	551	261319	176646
տեսակարար կշիռը վճարումներում (%)	70.6	96.5	22.1	1.9	0.2	1.3	7.2	0.3	100	100
2001 – III եռ.	185591	190140	44912	3752	897	1606	17960	452	249361	195950
տեսակարար կշիռը վճարումներում (%)	74.4	97.0	18.0	1.9	0.4	0.8	7.2	0.2	100	100
2001 – IV եռ.	206878	186689	68980	4649	643	1321	12438	261	288939	195920
տեսակարար կշիռը վճարումներում (%)	71.6	96.8	23.9	2.4	0.2	0.7	4.3	0.1	100	100
2002 – I եռ.	171950	164255	43425	3948	235	800	16290	358	231900	169361
տեսակարար կշիռը վճարումներում (%)	74.1	97.0	18.7	2.3	0.1	0.5	7.0	0.2	100	100

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՐՏԵՐՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2001 թ. մայիս ամսից Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է քարտերով վճարումների միասնական՝ «Արմենիան Քարդ» համակարգը, որին անդամակցում են ՀՀ տարածքում գործող 12 բանկեր, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը: Ներկայումս համակարգը գործում է Երևանում, Էջմիածնում և Ստեփանակերտում:

2002 թ. 1-ին եռամսյակի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող «ԱրՔա» քարտերի քանակը կազմել է 5191, որոնք թողարկվել են 11 բանկերի կողմից:

Քարտերի սպասարկման ենթակառուցվածքը

	Քանակ
Բանկոմատ	4
Կանխիկացման կետ	44
Առևտրի/սպասարկման կետ	82
Ընդամենը	130

Քարտերով կատարված գործարքներ

	Գումար	Քանակ
Բանկոմատների միջոցով	329171500	15466
Կանխիկացման կետերի միջոցով	459866130	15427
Առևտրի/սպասարկման կետերի միջոցով	15603107	2106
Ընդամենը	804640737	32999

S.W.I.F.T. ՀԱՄԱԿԱՐԳ

